

Ա Ի Օ Ե

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՅԳԷՅԻՆ, ԲԸՆԸՍԻՐԿԱՆ, ԳԻՆԳԻՏԿԱՆ  
ԵՒ ՔԸԴԸՔԸԿԱՆ

ԻՆՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ




ՅԵՐՈՒՍԸԴԷՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԱԲԵԱՆՑ

1874





# Մ Ի Փ Ն

ԻՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ  
ԹԻԻ 5.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԾԱԾԻՍ 31  
1874.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Հովնաթան այցելութեան Մեքսիկոյի վարդապետի Մուրադեանց  
ի Ռուսիոյ, ի Ռուսմանիա և յԱւստրո - Հունգարիա :

Ա. Մ Ե Ն Ա Պ Ա Տ Ի Ի Ս Ր Բ Ա Զ Ա Ն Հ Ա Յ Ր

Նախագահ Տնօրէն Ժողովոյ Ս. Ալեքսանդր Հայոց Երդաստեղի.

Ա. Մ Ե Ն Ա Պ Ա Տ Ի Ի Ս Ր Բ Ա Զ Ա Ն Հ Ա Յ Ր  
Հրամանաւ և Տնօրէն Ժողովոյ որոշմամբ այցելու նշանակուելով մեր գաղթական լքգայնոց, որք ի Ռուսիոյ, ի Ռուսմանիա և յԱւստրո - Հունգարիա, ի 16 Յունիսի 1873 ամի ուղեւորեցայ Ս. Մթառէս ի Պոլիս, անտի այցելութեանս երկիրներն երթալու համար : Սակայն լսելով քոյրայի

(Ժանտախտի) տխուր լուրեր և ունենալով առջեւ քարանձինայի դժուարութիւններ ստիպուեցայ ի Պոլիս մնալ թէպէտ ճանապարհորդութեան բարեպատեհ ժամանակի անցներուն և և ձմրան մօտենալուն պատճառաւ շատերն յորդորեցին զիս թողուլ առաջիկայ պաշտօնիս կատարումն և ի Ս. Մթառս դառնալ և կամ տարակալ



ի Պօլիս մինչ ի գալուստն . սակայն նշմարելով որ կէս ծանապարհէն դառնալն եւս ունի իւր անպատեհութիւններն , լաւ համարեցի , թէ եւ անապան , ի կատար հանել այցելութեանս պաշտօնն :

Հետեւապէս , երբ քօլերայի լուրերըն նուազեցան ( որք այդէն տարապայման չտիազանցութեամբ տարածուած էին ) Յանձնարարականներ առ ի Սուլթանից և Վարդար — Հունգարիոյ Վեսպանատուներէն , և ի Բնակ. 1873 ամի ելայ Պօլսէն , առնելով ընդ իս Վանցի Սեդրակ Տ . Սարգսեանց պատանին , իբրեւ օգնական ի ծանապարհին , որ մտադիր էր յԵւրոպա մնալ ուսանելու համար :

Սուլթանի հայաբնակ քաղաքներն և գիւղերն իրարմէ խիստ հեռի լինելով և կրկնապատիկ ծանապարհորդութեան և ծախուց դժուարութիւններ ունենալով՝ այցելութեանս պաշտօնն միայն կարացի կատարել ի Վանայ , ի Շուսիս և ի Սուլթանի . իսկ Սուլթանից կամ Սուլթանիցից մէջ գրեթէ ամեն հայաբնակ քաղաքաց այցելութիւն արի , որք են Բուքրէշտ , Իբրայիլ , Պալաց , Դոքշան , Բարսիլ , Սոման , Էշաշ , Պոլսուշան , միայն մնաց թրքա — Հոգնա քաղաքն ( ծանապարհի լեռնոտութեան և բարբեր ցրտոյն պատճառաւ ) և քանի մի գիւղեր , որոց մէջ կը բնակին հազիւ թէ 1—10 հայ ընտանիք , Սակայն թրքա — Հոգնայի Վրդային Հոգաբարձութիւն եւս յառուկ նամակ գրեցի , ներդրութիւն խնդրելով որ չը կարացի այցելութիւն առնել , և յորդորներ կարգացի ի մասին Վրդայնութեան եւ Կոնստանտնուպոլսոյ մէջ միայն Սուլթան քաղաքն է , ուր մեր դասնակից ազգայինք կը բնակին , իսկ մնացեալ քաղաքաց մէջ , թէ եւ

ուսնիք համազգիներ , բայց դառնութեամբ հռովմէական Նիկիեցւոյն յարեալ լինելով՝ այցելութիւնս եւս եղաւ քստ այնմ , այսինքն ազգայնութեան նկատմամբ միայն և ոչ ընդ նրմին և հոլութեան :

Եւրդ կը մնայ համառօտիւ տեղեկագրել Վ . թէ ինչ եղանակաւ կատարեցի այցելութեանս պաշտօնն . Բնակ ընդունելութիւն գտայ ժողովորդեան կողմէն և Վ . թէ ինչ բարոյական և նիւթական արդիւնք ունեցաւ :

## Ե.

Սուրբ Եթովպոս ինձ տրուած Կոնստանտնուպոլսոյ համեմատ այցելութեանս դիտաւոր նպատակն համարեցի քարոզել եկեղեցեաց մէջ և դպրոցներուն այց ելանել , քննութեան առնուլ աշակերտելոց ուսման վիճակն , և ըստ չափու կարողութեան նրա , հաղորդել Տեսութեանց , թէ բանիւ եւ թէ գրով , այնպիսի խորհուրդներ , որք նպատատաւոր են ազգային կրթութեան և յառաջագիմութեան : Հետեւապէս օրինաւորութիւն և հարկ համարեցի , ամեն տեղ , ուղղակի թաղական Խորհրդոց և Հագաբարձութեանց գիմել և նոցա գիտութեամբ անօրինել ամեն բան : Բնակ քաղաք որ մտայ , առաջին գործս եղաւ ուղղակի տեղական Հայոց եկեղեցին երթալ , Վրդային Հոգաբարձութեան յայտնել նպատակս , ունեցած կոնդակներս ցոյց տալ եւ նոյն Հոգաբարձութեան խորհրդով որ նշանակել Կոնստանտնուպոլսոյ քահանային եկեղեցւոյ մէջ , եւ ապա , առանց որ և իցէ դրամա ժողովութեան խօսք բանալու , քարոզ խօսիլ , բաւական համարելով Կոնստանտնուպոլսոյ մէջ ալիս որպէս ազատական



նուիրստուութեան յիշատակութիւնն :

Այն եղանակն ընտրելուս նպատակն կրկնակի էր : Առի որ գրեթէ ամեն քաղաքաց մէջ այնպիսի գայթակղական պատմութիւններ կը լսէի նախորդ այցելուաց ոմանց վերայ՝ թէ գրամաժողովութեան անարգ միջոցներուն, թէ տանէ ՚ի տուն շրջելուն, թէ աղօրինի պահանջումներուն եւ վարմունքներուն, և թէ՛ նուէրներն իրենց տեղն չհասցնելուն նկատմամբ, որ ամօթահար կը կարմնէի : Արդի և թէ կէտ նպատակի բռնէի դրամաժողովութիւնն, իսպառ պիտի նսեմացնէի այն բարոյական աղբեցութիւնն, զոր պարտաւոր էի ունենալ իրեն եւ այցելու և հովիւ գաղթական և բազմակարօտ ժողովրդեան :

Աւստի այսպիսի պարագաներ աչքի առաջ ունենալով իմ կողմէն ամեն նեւին դրամաժողովութեան խորհրդէի յարուցաներ, այլ ամենայն ինչ ՚ի կամս թողական խորհրդոց և Հոգաբարձութեանց կը թողուի տնօրինել ինչպէս որ պատշաճուոր է :

Ի.

Աղբարութիւնն ու երախտագիտութիւնն պարտք կը դնեն խոստովանիչ, որ ամեն տեղ շատ սիրով կը դունչնին զմեզ, ուր որ եկեղեցիներն բնակարան ունենին՝ այն տեղ սենեակ տալով : Իսկ ուր որ չունենին՝ առանձին տուն պատրաստելով : Առջաի ժամանակ որ կը մնայինք որ եւ իցէ քաղաքի մէջ՝ կայութեան ամեն պիտոյքն և կերակուրն կը հոգար թաղական խորհուրդն կամ Հոգաբարձութիւնն թէ իւր կողմէն, այսինքն աղբային սնտու կէն և թէ՛ ուղղակի ժողովրդէն : Այսպէս կը հագա-

ցուէր նսեւ ճանապարհի ծախքն թէ իմ և թէ՛ հետս գտնուած պատանւոյն համար՝ պատուաւոր եղանակաւ, այնպէս որ Առանայէն մինչեւ Սուլայ հաղիւ թէ մի երկու անգամ ճանապարհի ծախք վճարած եմ : Եւ այց յայտմանէ մի քաղաքի թաղական խորհուրդն կամ Հոգաբարձութիւնն նախ հեռագրով կանխաւ կը ղեկուցանէր տեղւոյն Հոգաբարձութեան, որպէս զի պատրաստութիւն տեսնեն և դիմաւորեն ըստ արժանոյն, թողով տեղի գծուարութեան եւ տատամսութեան, որք շատ անգամ կարող են հանդիպիլ նարեկ ճանապարհորդին :

Գ.

Այցելութեանս բարոյական եւ նիւթական արդիւնաւորութեան վերայ խօսելէն առաջ հարկ կը համարիմ համասօսիւ յիշել ներկայ Տեղեկագրին մէջ (ըստ որում վիճակագրական քաղաք ծանօթութիւններս պիտի կարգաւորեմ առանձին հրատարակութեան համար) թէ՛ Ռումելիի և Ռումանիոյ մեր Աղբայնոց մէջ մեր աղբայնութեան յոգակապներէն մին, այսինքն աղբային լեզուն, հաղիւ ուրիշ կը խօսուի, քանի Ռումելիի մէջ սովորաբար Տաճկերէն իսկ Ռումանիոյ մէջ՝ Ուլահերէն կամ Ռումներէն լեզուներն կիրառութեան մէջ են : Եւ թէպէտ ամեն քաղաքաց մէջ կային աղբային դպրոցներ, որք կը կառավարուէին Արեւելոց կամ Ժողովարդեան եկամտով և արդեամբ, բայց ընդհանրապէս օտար լեզուաց ուսումն աւելի յառաջ գնացած է քան հոյկականն, և այս շատ բնական է, որովհետեւ այն լեզուն, որ կը խօսուի հասարակութեան և մանուսնոց ըն-



տանեաց մէջ, աւելի դիւրութեամբ  
յառաջ կ'երթայ նաեւ դպրոցաց մէջ,  
Այն ցաւալի երեւութիւն համար,  
որչափ կարելի էր, խօսեցանք թէ տա-  
տնին և թէ՛ Աշկեղեցւոյ, հրաւիրե-  
լով ամենուն ուշադրութիւնն մայրե-  
նի լեզուի ուսման և ընտանեկան կի-  
բաւութեան վերայ: Այնպիսի փայծ  
եւ նախանձաւորութիւն ունեցանք,  
ըստ մեր նաւիրական սրտառաւորու-  
թեան, նաեւ մայրենի Աշկեղեցւոյ ծի-  
սիցեւաւանդութեանց անտրամապահ  
պանութեան համար, խօսելով մաս-  
նաւորապէս Հոգաբարձութեանց և  
քահանայից հետ ինչ որ արժանն էր  
և կարեւոր: Արդարեւ՝ տեղ տեղ տե-  
ւանք անկողիք քահանայք եւ ցաւե-  
ցանք, բայց տեսանք ընդ նմին և ար-  
ժանաւոր Հոգաբարձութեւն Քահա-  
նայք, որոց նմաններն գոթադրաբար  
խիստ հազուադիւր են ներկայ ժա-  
մանակիս մէջ, Հետեւապէս անդորր  
խոյճիւ կարող եմք ասել, որ անշուշա-  
բարոյական օգուտ ունեցաւ մեր այ-  
ցելութիւնն այնպիսի ժողովրդեան  
մէջ, որոնք երկար ժամանակէն ՚ի վեր  
օտարազանութեան ծոյցին մէջ ապրե-  
լով և օրինաւոր յորդորոյնք չունե-  
նալով, անդգալի կերպիւ, օր աւուր  
ընտելացած են օտարազանութեան,  
ստուեր ամբողջ իրենց նախնեաց ան-  
նշման հայասիրութեան վերայ, որք  
իրենց գաղթականութեան մէջ, հայ-  
րենաբնակներէն աւելի, իմացած են  
ամուր կերպիւ պահպանել հայ ազ-  
գութիւնն, հայեցի ընտանեկան սի-  
րուն կեանքն ու սովորութիւնքն, մայ-  
րենի լեզուն ու Արօնն: Ամեն տեղ  
ընդհանրապէս կը նշմարուին մեր գաղ-  
թական նախնի Հայոց քերձ Հայասի-  
րութեան և Արօնասիրութեան գեղե-  
ցիկ յիշատակներն եւ խիստ անբու-  
ժելի ցաւ պիտի լինի ներկոյ աղաւ

գարտս մէջ, եթէ նոցա յաջորդներն և  
սրդիրն թերիանան իրենց նախորդաց  
հայրենասիրական գովանի առաքինու-  
թիւններէն: Աւրեմն, այսպիսի ժողո-  
վրդեան մէջ այն այցելութիւնն ամե-  
նեւ ին ապարդիւն չը մնար, որոյ նը-  
պատակն լինի զարթոյցունել սէր ազ-  
գայնութեան, սէր մայրենի լեզուի և  
սէր անխառն պահպանութեան հայե-  
ցի սովորութեանց և աւանդութեանց:

Իսկ գալով նիւթական արդիւնա-  
ւորութեան՝ հարկ է իմանալ Ն. Ի.  
որ Սուրբիկի եւ Սուրմանիոյ մէջ մեր  
ազգայինք այնչափ բազմութիւն և հա-  
րուստ չեն, ինչպէս որ կը պատմուէր:  
Երկրորդ՝ կանխաւ ասացինք, որ միք  
նախորդ այցելուաց գաղթականութիւնն  
բառնալու և մեր պաշտօնն իւր փո-  
ժութեան մէջ պահպանելու համար  
ամենեւին հետամուտ չեղանք դրա-  
մաժողովութեան, թէ և Ս. Միտոյս  
բազմադիմի կարծածութիւններն զգու-  
էր մեզ, այլ թաղականք, Հոգաբար-  
ձութեւն և այլ մասնաւոր անձինք ինչ որ  
կրկնեց աղաւ և յօժար կամօք մատու-  
ցին, զայն միայն Ս. Միտեւս ինձ  
տրուած ժապուհեալ Տումարի մէջ  
իրենց ձեռքով և իրենց կերպով գրել և  
փաւերացնել տուի ապահովութեան  
համար, Ինչ որ նուիրեցին թէ դը-  
րսով եւ թէ՛ այլ իրեղէնք, ամենուն  
մասին եւս գոհութեան արժանի են,  
վասն զի նուիրեցին ինքնադրոյս յօ-  
ժարութեամբ, անարտունջ եւ զը-  
ւարթ դիմօք:

Այս ամեն նուէրներն պիտի տես-  
նէ Մեննապատիւ Արքանութիւնդ  
և Պատկառելի Ժողովդ, թէ յիշեալ  
Տումարին և թէ առանձինն պատրաւ  
տած արդեանց և ծախսւց Յուլիսին  
մէջ, զորս կը մատուցանեմ ընդ ամին:  
Արգեանց եւ ծախսւց ցուցակին  
մէջ պիտի տեսնէ Պատկառելի Ժողովդ



նչ միայն յանուն Ս. Մթառայն արքունւոյն, որոնք զրոմական եւ այլ նուէրներն, որք արդէն արձանագրուած են ժապաւնեալ Տումարին մէջ, այլե թէ թաղական խորհուրդներէն ու Հոգաբարձութիւններէն եւ թէ մասնաւոր անձինքներէ յատկապէս հոգեւոր պաշտօնական տարութեանցս համար ինձ տրուած զրոմական նուէրներն, զորս թէ եւ նուիրողք չեն կամեցած արձանագրել Տումարին մէջ, բայց ես պարտք կը համարիմ մի առ մի հաղորդել եւ մատուցանել պատկառելի ժողովոյդ. Վե՛րս արդարեւ նոյն ժողովողեան արդիւնքն է, թէեւ անուշ դակի կերպիւ. եւ Նի՛կիտ լինելով զաւակ Ս. Մթառայն՝ ես արդէն շատ եւ շատ բաւական կը համարիմ այցելութենէս եւ ճանապարհորդութենէս ստացած բարոյական մեծ օգուտըն, առանց նիւթական շահուց մասին վերապահելու իմ համար, մանաւանդ որ Ս. Մթառայն արդէն իմ ճանապարհային ծախուց մի մասն կանխաւ հոգացած էր:

Երգ՝ այս ամենն համառօտիւ տեղեկագրելէն զինի կը խնդրեմ—Վախ՝ (որհնութեան կոնդակներ զսկել յանուն թաղականաց, Հոգաբարձութեանց եւ մասնաւոր նուիրատու անձանց, որ միանգամայն կը լինի նաեւ ապահովութեան ընկալագիր:

Երկրորդ՝ մեր Սառանգաւորաց Վարժարանի ուսմանց ծրագիրն զոր կելով հանդերձ՝ առաջադրել թաղականաց եւ Հոգաբարձուաց, որ իւրաքանչիւր քաղաքէ մի մի ձրիաթոշակ եւ (եթէ կարող են) մի մի թոշակատու մանուկներ առաքեն մեր վարժարանին մէջ ուսանելու եւ ի ժամանակին իրենց երկիրն վերադառնալու ուսուցչական կամ եկեղեցական պաշտօն վարելու համար, վարուց, բարուց եւ

այլ կատարելութեանց մասին երաշխաւորեալ ի կողմանէ թաղականաց եւ Հոգաբարձութեանց: Վասն զի կը յուսամ թէ այս եղանակաւ Ս. Մթառայն յոյժ մեծ եւ հիմնաւոր ծառայութիւն մատուցած կը լինի այն պատուական եւ ընտիր Հայկազն ժողովողեան, որոց մէջ ազգայնութեան հոգին առհասկակաւ եւ օտարաճելութենէ ազատ պահելու համար խիստ եւ խիստ ազգու միջոցներ պէտք են:

Երրորդ՝ Սուրբ Ստեփաննոսի մէջ կեդրոնական փոքրիկ Վրաստան հաստատել, յոսուկ Տեսուչ նշանակել եւ Ս. Մթառայն Տպարանէն հրատարակուած գրքերէն զսկել, որպէս զի անդական հայկական դպրոցներն կարենան, առանց հեռաւոր դժուարութեանց, նոյն կեդրոնական Վրաստանէն ամեն դասական գիրք գիւրաւ ձեռք բերել: Եւ մասին ես յարմար կը գտնեմ Պօթուշան քաղաքն, ուր կը գտնուի Երմ. Տէր Պողոս հայագէտ եւ ընտիր քահանայն, առ որ եթէ նամակ գրուի, պաշտօնական հրահանգով հանդերձ, կը յուսամ թէ սիրով կը յոժարի ընդունիլ գրավաճառութեան Տեսչութիւնն ի պատիւ Ս. Մթառայն եւ յօգուտ ուսումնաճարաւ մանկանց Սուրբ Ստեփաննոսի:

Եւ չորրորդ՝ եթէ պատշաճ կը դատուի, քանի մի արժանաւոր քահանայից քաջալերական եւ խորախուսական նամակներ ուղղել, որոնք իրենց անբասիր վարուք արժանացած են ժողովրդոց գոհունակութեան:

Եւ յուսամ թէ վերոգրեալ առաջարկութիւններս ի գործ դրուելով կը բարձուի, չնորհիւ քանի մի անբարեմասն այցելուաց անդական ժողովողեան մէջ ճարակուած, անվստահութիւնն եկեղեցականաց մասին եւ աւելի սերտ յարաբերութեամբ եւ



համակրութեամբ կը կոտորէին Մզգային Վեդրոտարան Վարչութեան և Ս. Մթողոյս հետ :

Մշտափ բուն հովուական այցելութեան մասին :

Իսկ ինչ որ կը վերաբերի միւս ծոնապարհորդութեան , որ Ղւստրո - Հունգարիա , ՚ի Վերմանիա , ՚ի Օւելցերիա և յոտալիա , ցաւօք սրբաւի կը յայտնեմ , որ թէեւ ձմեռային բքաբեր ցրտութեան պատճառաւ չը կարացի , փափաքանացս համեմատ , այցելանել Ղւստրո - Հունգարիայ մէջ գտնուած , մեր բոլոր հռովմէագաւան համազգի եղբարց , որք իրարմէ հեռաւոր քաղաքաց և գիւղաքաղաքաց մէջ կը բնակին , այլ յաջողեցայ ՚ի Չերնովից և ՚ի Լեմպերկ Մզգային Մրբեպիսկոպոսարանէն տեղեկութիւններ քաղել , որք աւելի պատշաճաւոր են առանձին հրապարակութեամբ ՚ի ըյս ընծայուելու , քան թէ սոյն համառօտ Տեղեկագրին մէջ ամփոփուելու : Ի Ս իեննայ հոգեւորապէս միութարեցի մեր հայազգի վաճառականներն շատերն խոստովանեցնելով եւ հաղորդելով , ընդ նմին այցելանելով թէ ասա եւ թէ ապա ՚ի Ս ենեպիկ Սիսիթարեան Սիաբանից Սանայ և Մարոցայ և ընդունուելով ազգային սրտաշարժ համակրութեամբ . ՚ի Օւելցերիա ուրախութեամբ սրտի տեսայ մեր հայազգի ուսանող բազմութիւ պատանիքն և քանի մի հայ ընտանիք ( որք իրենց զուակաց կըրթութեան համար այն տեղ կը բնակին ) զանազան տեղեկութիւններ քաղելով թէ իրենց վիճակին և թէ նոյն յառաջագէմ երկրին Համալսարանաց և Վարժարանաց նկատմամբ , որպէս զի առաւել ՚ի մօտոյ ծանօթանամք թէ ինչ կրնն այն տեղ մեր հայ զաւակներն և եթէ Ս . Մթողո իւր մա-

ռանդաւորներէն զոկելու լինի , ինչ կարելոր պայմաններ և նպատաւոր միջոցներ կան : Հետալիայ ծանօթացայ մի հայկական վաղեմի աղիւ Վերդաստանի հետ , որ թէեւ օտարութեան մէջ և գրեթէ մեր ազգայնոց անծանօթ , բայց հայութեան սիրով կը խանդաղտաւի ու կը պանծայ , եւ այնքան միութարեցաւ այցելութեամբ , որ իւր անդամներէն մի հայտարար երիտասարդ յանուն Ս . Մթողոյ 23 փաղ , ոսկի նուէրն ըտփովմամբ ընդունել տուաւ ինձ , յայտարարելով որ եթէ չընդունիմ , կը նշանակէ որ չեմ ուզէր իրենց Վերդաստանն հայ ծանաչել :

Հայոցն ծանապարհորդական համառօտ գծագրէս յայտնապէս կընրչմարէ Վանասպառիւ Սրբաղնութիւնը եւ պատկառելի յաղովգ , որ կը յիշատակեմ միայն ազգայնութեան վերաբերեալ կէտերն , և չեմ նկարագրեր իմ տեսած երկիրներու և երեւելի քաղաքաց ուսումնական , կրթական , թագաւորական և հասարակական ամեն հաստատութիւններն , հրնութեան և նորութեան թանգարաններն , գեղարուեստական և ճարտարապետական հրաշալիքներն , միով բանիւ մարդկային մտաց , հանճարաց և բաղիկաց զորմանահրաշնունդներն , վասն զի այդ մասին ոչ թէ քանի մի սող Տեղեկագիր , այլ բազմահատոր մատեաններ պէտք են : Մշոյս միայն կը համարձակիմ տսել , որ լուսաւորութեան սելսարհէն մինչեւ ցարդ մեր խեղճ Մզգն ոչ թէ իսկական լուսոյն , այլ , եթէ կը յարմարի տսել , միայն լուսոյ ծուխին փարած է , առաւել կուրանալով , քան թէ լուսաւեսիլ եւ լուսատեք լինելով : Վրեթէ Լարսպայի միայն յառութիւններն մեր մէջ մտած են , իսկ ինչ որ ազգաշինա-



կան է եւ յառաջագլխական, ինչ որ նորոգել է եւ վերականգնել անկեալ աղգութեանց, ինչ որ աղնուացուցիչ է եւ բարձրացուցիչ մարդկային արժանաւորութեան, այս ամեն բարիքներու ճաշակն անգամ տակաւին առած չեմք: Ինչպէս կարող եմք առնուլ. — Յառաջագէտ աղգաց բարի օրինակին միայն հետեւելով, որտի եւ մարի հիմնաւոր մշակութեամբ, բարոյական եւ մտաւորական զարգացմամբ, անդուլ եւ արթուն աշխատութիւն ամն զի ամեն տեղ աշխատասերներն են միայն, որ կը յառաջեն, կ'իջնեն եւ կը խնդան. իսկ անաշխատներն՝ կամ գերի են, կամ բռնաւոր, կամ կը հեծեն, կամ կը սուկան:

Եւ յայդ տեսայ ես իննամսեայ աշխրութեանս եւ ճանապարհորդութեանս մէջ, եւ այս համոզմամբ մատուցանելով ներկայ համառօտագլխ Տեղեկագիրս լմեն. Սրբազնութեանը եւ Պատկառելի ժողովոյդ

Սնամ

խոնարհական ակնածութեամբ

17 Մարտի ՍԵՆՏԵՄԲԵՐ ՎԱՐՊԵՏԻ  
1874 թի ՍՈՐԱՐԵԱՆԿ  
ՂԱՐԱՍԱՆԷՄ

ԲԵԹՂԵՂԵՄԻ Ս. ՄՆՆԴԵԱՆ

ԽՆԴԻՐ

(Հարուստութիւն. տես թիւ 4.)

Այս վարագոյրը (որ այժմ չը կայ) Ս. Մննդեան Այրի՝ մեր Եկեղեցւոյ կողմի սանդուխի վարի ծայրէն սկսեալ մինչեւ Մսուրն կը ձգուէր եւ բաժնի վար մինչեւ գետին որմերն ամբողջ կը ծածկէր, մուսապաշէ շինուած էր, վերան կային պատկերներ Քրիստոսի Ս. Մննդեան, յեգխպոս երթալուն,

Աւետման, Հովններու, ամենայն սրբապաշէ, երեք տեղ լատինական նըշաններ, երկու ձեռք իրարու վրայ եւ անոնց քով գրեր Քաղղիսթէն եւ Լատիններէն լեզուաւ, Թարգմանութիւնն է հետեւեալը. « Զնուէրս տուեալս յաւագաց Թագաւորացն Յրանկայ, հրգեհիւ զայրեալս, ամենաքրիստոնէան Քաղղիս վերհաստատեաց: Ասոնցմէ զատ վարագոյրի մէկ ծայրէն մինչեւ միւսն մէկ ձեռաց լայնութեամբ երկդ ծի մէջ Լատիններէն գրով Աւետարանէն առնուած խօսքեր, ինչպէս « Փառք 'ի բարձունս եւ այլն գրուած էին: Ալ երջուպէս զանազան գոյներով նկարուած գեղեցիկ տեսք մի ունէր, որոյ առթիւ պատկերավարագոյր անուանեցինք:

Իսկ հին վարագոյրը, բաժնի վար կէս կանգնող չափ էր. այս վարագոյրը երբ Բգէշը մի անգամ Բեթղէհէմ գնաց իբրեւ թէ լատինաց բռնի կախած վարագոյրը իջեցնելու, տեսաւ. նոյնպէս ուրիշ անգամ երբ Լատինաց կախածը վար առաւ եւ 'ի Քաղղիս շինուածը կախեց, դարձեալ հին վարագոյրը իւր տեղն էր իւր նախկին վիճակով հանդերձ ծոպքերով, որք վարագոյրի ստորին կողմն են եւ մինչեւ հիմա եւս կայ: Լատինք կ'ըսեն թէ Հայք եւ Յոյք կտրելով կտրելով կէս կանգնող չափ մնացած է հին վարագոյրը. բայց այս սուտ է. վասն զի եւ թէ վարագոյրը կտրուած վնէր. պէտք էր ծոպքերն չաւնենար, որովհետեւ վարի կողմն լինելով ամենէն առաջ աւնոյք պէտք է կտրուէին: Իսկ նորա վարաց եղած նշաններու մասին ամբողջին համար բան մը չեմք կարող ասել. սուկայն կաննշաններ, որ Լատինական են:

Մարտ 8 ին Մեր փոխանորդին հաւագրեցինք, որ Յունաց փոխանորդին հետ ընկերութեամբ աշխատի կտրե-



ընկածին չափ կախուած վարագոյրը վար առնելու համար : 14 ին Փօփա-նորգը հեռագրաւ յայտնեց թէ Բ. Դուռը խառնացաւ այս խնդիրն կարգադրել և մեր իրաւունքն ևս պաշտպանել :

Մարտ 15 ին Բ. Դուռը Բդեշին կը հեռագրէ , թէ՛ Հայք կը բողոքեն իրենց մէկ պատկերը Լատինաց տըրուելու մասին , եւ միանգամայն թէ պատկերի եւ թէ՛ վարագոյրի մասին բացատրութիւն կը պահանջէր : Բդեշ իր կը պատասխանէ թէ ձեր հրամանը կատարեցի , որովհետեւ հրամանագրի մէջ չորս պատկեր Հայոց և մէկ պատկեր Լատինաց նշանակուած էր : Վարագոյրի մասին եւս կը պատասխանէ թէ՛ ինք միայն Բ. Դրան հրամանը կատարած է : Մի և նոյն օրը Բդեշը մեզ առայ , որ այն տեղը , ուր մէկ պատկեր կ'ուզէք կախել , կախեցէք , սակայն նորա ցոյց առած տեղը մեր պատկերին խէտեղը չէր , այլ Լատինաց ոտորերկրեայ ճանապարհին՝ Ս. Արին մէջ բացուած դրան ճակատն էր , ուստի մեր կողմէն պատասխանուեցաւ , թէ՛ մեր պատկերին տեղը Լատինաց պատկերը կախեցիք , ուր Լատինք բնաւ պատկեր չ'ունենին , երբ զայն վար կառնէք , մէք մեր պատկերը կը կախեմք :

Այս խնդիրներն հետզհետեւ ուրիշ կերպարանք առին , Լատինաց և Յունաց մէջ կռիւներն աւելի սաստիկացան : Մարտի 25 ին Լատինք իրենց Մաղկազարդին օրը , դրան բացման հանդէան կատարելու առթիւ , հանդիսաւոր թափօրիւ իրենց վանուց փողոցի դռնէն դուրս ելելով՝ և Ս. Մընդեան Եկեղեցւոյ փողոցի երկաթեայ փոքր դռնէն ներս մտնելով՝ սիւնադարձ գաւթէն սկսան թափօրանման յառաջ երթալ , որոց Յոյք բազմութեամբ ընդառաջ ելելով՝ կը դիմադրեն խա-

փանելու համար , և ահա՛ կռիւը կը սկսի , և երկուստեք զիրեար բրածնէ կ'առնեն . զոքրը կը միջամտէ , հիմաւ պետի մը մասը կը կոտորի , թափօրը կը խանգարի , Լատինք կէս մը սիւնաւ զարգ գաւթի մէջ բացուած իրենց դռնէն ներս կը մտնեն , կէս մը ևս մեր Եկեղեցւոյ դռնէն , Մեր դրան վերայի կանդեղը կը կտորի , մեր քջոյր և սեւ զանին վերայ եղած մեծ խաչը Լատինք կ'առնեն Յունաց զարնելու , ի վերջոյ զօրքը երկու կողմն եւս ցրուելով՝ կը ռիւր կը գազրի : Այս գայթակղելի արարքը մեր վերաբերման ժամանակ տեղի կ'ունենայ :

Ապրիլ 13 ին մի և նոյն պատճառաւ կռիւը կը կրկնուի այսու տարբերութեամբ , որ այս անգամ կռիւը մուտ չ'ունենար մեր Եկեղեցին , որովհետեւ Մարտի 25 ին դէպքին վերայ Տն. Ժողովը հրահանգ տուած էր մեր Եկեղեցւոյն դուռն փակ պահել : Այս երկրորդ խռովութիւնն ևս մեր սուրբ պատարագի ժամանակ պատահած է :

Այս ամենուն հետեւանքն էր նոյն աւուր 'գիշերը Ս. Այրի մէջ տեղի ունեցած անտի-քրիստոնէական դէպքը : Յոյն արքեպլ աշխարհականներ , սուրերով եւ հրացաններով զինեալ Ս. Այրի մէջ թէ՛ մեր , թէ՛ իրենց և թէ՛ Լատինաց պատկերներն կտորտեցին , Լատինաց թէ՛ հին և թէ՛ նոր վարագոյրներն , ընդ նմին և պատկերավարագոյրը , զոր Բդեշը Մարտ 3 ին կախեց , ոչնչացուցին , Մսուրի պատկերներն անհետացուցին եւ սեղանն քար ու քանդ ըրին , մէկ խօքով հոն , ուր խաղաղութեան և սիրոյ Աստուածը ծնած էր , և ուր ամեն օր խաղաղութեան ու սիրոյ պաշտօնեայներն հաշտութեան պատարագ կը մատուցանէին . յաւեր և յապականութիւն փոխեցին : Քրիստոնեայ Յունաց ձե-



ուտիք այս սրբապաշտութիւններն դու-  
ծեցան, ուսկից Սարակինոսներն դբու-  
շացան, և այս իսկ է մին ամեն թրիա-  
տոնեաց անուան, զոր ժամանակը եւ  
պատմութիւնը անշուշտ անհինջ ար-  
ձանագրեցին :

Ապրիլ 14 ին անմիջապէս Բգեշխը  
Բեթզէմ գնաց ուր և գնացին մեր  
կողմէն զանազան անձինք : Ամեն տեղ  
պէտք եղած ֆէֆլը բրին և արձանագը-  
րեցին : Մի և նոյն օրը կանուխ այս  
գէպքը 'ի Պօլիս Փոխանորդին հեռա-  
գրեցինք :

Ապրիլ 16 ին Բգեշխը կրկին Բեթ-  
զէմ գնաց, մեր կողմէն ևս մի քա-  
նի անձինք զրկուեցան, որք տարին ի-  
րենց հետ նորէն կախելու համար  
պատկերներ :

Բգեշխը երկու օր հոն մնաց և Տէ-  
րութեան ծախքով նոր Գամասոյ վա-  
րագոր մի կախեց . իւրաքանչիւր ազ-  
գի թէ պատկեր և թէ կանթեղ իրենց  
տեղն դրաւ . սակայն մեր մէկ պատկե-  
րին տեղ Լատինաց պատկերը դրաւ :  
Մեզ և Յունաց չը ներեց նոր կանթեղ  
կամ պատկեր կախել . բայց երկար վի-  
ճաքանութե՛ և առանձնախօսութենէ  
վերջը Հիւպատոսի և Գասաւորի հետ  
Լատինաց նոր կանթեղներ կախել տը-  
ւաւ : Իսկ Մսուրի խնդրոյն գալով՝  
նորա շինութիւնը տարտամ վիճակի  
մէջ թողուց և Լատինաց արգելք ե-  
ղաւ շինելու . որովհետեւ Յոյքը ընդ-  
դիմացան ասելով թէ շինութիւնը  
մեզ կը պատկանի և առ այս հին հրո-  
վարտակ հանեցին . ուստի Բգեշխը  
Մսուրի սեղանը առժամանակեայ չե-  
նել տուաւ . կանթեղներն եւ վարա-  
գորներն կախեց :

Այս խնդրոյն այսպէս վերջանալէն  
ղկնի դարակի ( տօղապ ) խնդիրը ծա-  
գեցաւ : Դարակը Ս. Մննդեան Ա. Ե.  
րին Մեր Եկեղեցւոյ կողմի սանդու-

խին վերայ է, որմին մէջ փորուած .  
Այս մասին խիստ և երկայն վիճաքա-  
նութիւն եղաւ . Լատինք երկիցս ի-  
րենց խօսքը փոխեցին . Բգեշխը կը ջա-  
նար, որ Լատինք դենն դարակը . իսկ  
Գասաւորը տեսնելով՝ որ նոքա խօս-  
քերնին միշտ կը փոխեն, պնդեց, որ  
նոքա չը դենն և մինչեւ անգամ գոր-  
ծուելիք անխառնութեան մը չը մաս-  
նակցելու համար, ուզեց ձգել երթար  
ի վերջոյ դարակը ոչ Մեր և ոչ Լա-  
տինաց կողմէն դրուեցաւ և խնդիրը  
կախ մնաց :

Հուսի ամսնեցուն Բգեշխը պատ-  
ուիրեց երեք ազգաց, որ իւրաքանչիւրն  
իրենց արարողութիւններն կատարեն  
առանց դուրսէն ներս բան մը բերե-  
լու, կամ ներսէն դուրս հանելու . այս  
պատուերին չը հնազանդողին զօրաց  
սուրններն սպառնացաւ : Մէք մեր հը-  
նազանդութիւնը յայանելով՝ չորս տա-  
րի առաջ Ս. Ա. Երին մէջ ձգուած կը-  
րակի մասին քննութիւն խնդրեցինք :

Որովհետեւ այս ամեն կախներուն  
մէջ բաւական վնասուած էինք, մանա-  
ւանդ թէ վերջինին մէջ մեր դարակի  
իրաւանց կորուստ կը նշմարուէր . ուս-  
տի Բ. Գուռը թագրիւր ուղղեցինք  
և նորա մէջ մի առ մի յիշեցինք մեզ  
եղած զրկանքներն : Բ. Գուռն նը-  
կատելով՝ որ այս կախներն վերջ չը  
պիտի ունենան, եւ որոց հետեւու-  
թիւնը ծանր է, ուստի յատուկ Բնիկ  
որոշեց, որով օր ըստ օրէական խոռ-  
վութիւններն սակաւ ինչ դադրեցան :

( Դարանակի : )

— 203 —



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑԵԿԵԴԱՅԻՈՅ ՅԱՐՍ-  
ՏԵՒՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԸ

Երբ Հայաստանեայց Առաքելական  
Եկեղեցւոյ նախնական սկզբնաւորու-  
թենէն մինչ ցարդ ունեցած պատմա-  
կան կենաց վերայ ընդհանուր ակնարկ  
մի ձգեմք, ակներեւ պիտի տեսնեմք  
որ բրիտանեական փրկարար լոյսը ա-  
րեւելքէն ճառագայթած ժամանակ  
Աւետարանի արգասաբեր սերմերէն  
մին ևս առաքելական ձեռամբ Ասիոյ  
բաղմաստուածեան հեթանոս երկիր-  
ներէն միայն մէջ ձգուելով, այն է ՚ի  
Հայաստան, սակաւ ժամանակի մէջ  
կ'ուռճանայ, կը ծլի, հետզհետէ ու-  
տեր և ճիւղեր կ'արձակէ, կը ծաղկի,  
կը պտղաբերի արդիւնաշատ և բարե-  
համ պտղօք և իւր զօրաւոր ազդեցու-  
թեամբ բոլոր Հայ դաւակայ սրտերու  
վերայ գերագոյն իշխանութեամբ թա-  
գաւորելով՝ կը կաղմէ Հայաստանեայց  
Կաթողիկէ և Առաքելական սուրբ Ե-  
կեղեցին: Պիտի տեսնեմք որ թէպէտ  
և շրջաբնակ հեթանոս ազգաց կողմէն  
ամենադառն հալածանաց սաստիկ-  
չունչ և փոթորկալից հողմեր և յոր-  
դահոսան հեղեղներ գետօրէն նորա  
վերայ կը խուժեն զայն արմատախիլ  
տապալելու համար, բայց նա արիւ-  
նաթափաւ եւ վերալից մարմնով կը  
տօկայ և աննկուն կը մնայ իւր բարձր  
և նուիրական կոչման մէջ: Պիտի տես-  
նեմք որ թէպէտեւ մոլեկրօնութեան  
անտի-բրիտանեական տենչանայ եւ  
հալածասիրութեան ժանտ ոգւոյն ջը-  
նորհիւ ոչ թէ միայն ալեկոծեալ Հայ-  
րենեաց, այլ նոյն իսկ օտար գաղթա-  
կանութեան մէջ անդամ շարունակ  
իւր կրօնակից եղբարց կողմէն կը շան-  
թակածի, և թէ և մի քանի ոտեր և  
ճիւղեր կը զօհէ այլ և այլ հետամուտ-

թեանց, բայց խաղառ ստաբանց ջը-  
լիներ. այլ միշտ հաստարմատ կը մը-  
նայ, և այսօր եւս իւր հինօրեայ բար-  
ձր զիրքովն նշանաւոր տեղ կը դրու-  
է ՚ի շարս բրիտանեայ ազգաց: Եւ  
այն որ այսօր ճմարիտ Հայու արիւն  
կը կրէ իւր երակաց մէջ, այն որ ունի  
ազգասէր սիրտ մը եւ եռանդագին  
բաղձանք իւր Ազգի և Եկեղեցւոյ ոչ  
միայն գոյութեան եւ տեւականու-  
թեան, այլ և լուսաւորութեամբ եւ  
պայծառութեամբ յարատեւ պահ-  
պանութեան, կարող չէ անտարբեր  
աչօք նայիլ իւր բաղմագարեան տա-  
ռապակիր և վշտակիր Մօր վիճակին  
վերայ, այլ նուիրական պարտք կղգայ  
մանրազնին եւ խուզարկու հետազո-  
տութեամբ քննել թէ արդեօք ո՞ր է-  
ին այն հաստատուն և ամրապինդ սիւ-  
ներն, որոց վերայ կառուցուած էր Ազ-  
գի և Եկեղեցւոյ գոյութեան շէնքը,  
որոնցմով կարողացաւ ցարդ կանգուն  
մնալ. որպէս զի նոյն ազգօգուտ եւ  
հանրաշահ սկզբանց եւ միջոցներուն  
խորը թափանցելով բոտ այնմ կարող  
լինի իւր ջանքը կրկնապատկել և գո-  
նեաւ մասամբ իւրի դեղ եւ դարման  
մատուցանել իւր Ազգի և Եկեղեցւոյ  
ներկայ տարտամ վիճակին:

Երբ Ազգ մը ունի իւր քաղաքա-  
կան անկախութիւնն եւ ինքնօրէնու-  
թիւնը և կը ջանայ իւր մէն մի անդա-  
մոց միաբն և սիրտը կը թել-բրիտանե-  
ական իմաստութեամբ և բարի դատ-  
տիարակութեամբ, նոյն ազգը կարող  
է սակաւ ժամանակի մէջ բարեկարգ  
վիճակի մը տիրանալ, և իրեն եւ իւր  
Եկեղեցւոյ գոյութեան վտանգ սպառ-  
նացող ո՞ր և է քաղաքական և կրօնա-  
կան յարձակմունքէ ազատ մնալ: Իսկ  
ընդհակառակն երբ Ազգ մը թէեւ  
ունենայ իւր քաղաքական ինքնուրոյն  
անկախութիւնը, սակայն բրիտանեա-



կան ճշմարիտ լուսով կատարելապէս լուսաւորուած , քրիստոնէական սիրով վառուած զաւակներ չունենայ , այն ազգը մտքի և սրտի կրթութենէ , որք ազգաց զօրութեան էական տարբը կը կազմեն , զուրի լինելով ազան կամ անազան նորա զօրութիւնը կը պառի , նորա փառքն ու մեծութիւնը կը նսեմանան , և վերջապէս կը կործանի , վասն զի Ազգաց ճշմարիտ մեծութիւնը ճշմարիտ փառքն ու զօրութիւնը քրիստոնէական դաստիարակութեան մէջ է : Ազգի մը յարատեւ գոյութեան համար նիւթական ազատութենէն աւելի բարոյական ազատութիւն , խղճի ազատութիւն հարկաւոր է , որ միայն քրիստոնէական կրթոնի շնորհն է :

Այն անհրաժեշտ ճշմարտութեանց այն ժամանակ քաջ խելամուտ եղան մեր երջանկայիշատակ նախնիք , երբ արդէն Արշակունեաց հարստութեան ժամանակ Հայաստանի քաղաքական անկախութեան շէքը իւր տառանալ և քայքայեալ վիճակով մերձ էր կործանման :

Ս . Սահակ եւ Մեսրոպ , Հայաստանի բարոյական մշակութեան սատար երկու անզուգական Ամուքն , երբ տեսան որ Արշակունի մոլի թագաւորաց և խռովատէր նախարարաց յուզած երկպառակութեանց շնորհիւ հայրենեաց իշխանական մեծութիւնը սուկայծեալ վիճակի մէջ էր և ընդ հուպ պիտի չիջանէր , մի կողմանէ արտասուեցին և ողբացին ժողովրդի ապագայ թշուառութեան վերայ , իսկ միւս կողմէն սրբեցին իրենց արտասուքն և սկսան ամենայն ջանք և ճիգ թափել Յիկեղեցւոյ զաւակաց սիրան և միտքը կրթելու քրիստոնէական ուսմամբ և դաստիարակութեամբ , և նուազ զԱզգն բարոյ սուրբ վերակենդա-

նայնել : Վասն զի քաջ տեղեակէին , որ Հայաստանեայց Յիկեղեցին և Ազգն մի հոգի և մի մարմին կը կազմեն , և որովհետեւ ազգի մը ամբողջացուցիչ մասունքները նորա անդամներն են , հետեւապէս եթէ Ազգին անհատից միայն և սիրտը խոպան և անմշակ մը նար , եթէ Յիկեղեցւոյ իւրաքանչիւր զաւակ քաջ խելամուտ չը լինէր իւր մայրենի Յիկեղեցւոյ ուղղադաւանութեան և հարադատութեան , ի հարկ է եւ Ազգն ի ժամանակին անկարող դնուելով զինքն հօրեղապէս պաշտպանել ընդդէմ բաղմախուռն շանթից և կայծականց մոլեկրօնութեան , պիտի հակամիտէր այս ինչ եւ կամ այն ինչ ազգի անիրաւ սահանջմանց գլուխ ծռել , և Ազգային և կամ Յիկեղեցական միութեամբ իւր գոյութեան ամբողջական դրութեան հիմը խախտել և հետզհետէ օտար միակերպութեամբ անհետանալ : Իսկ ընդհակառակն եթէ իւրաքանչիւր Հայ զաւակ լիովին ըմբռնէր քրիստոնէական ուղիղ և հարադատ ոգին և իւր Յիկեղեցւոյ դաւանութեան ուղղութիւնն , այն ժամանակ պիտի նշմարէր իւր սուր աչքերով խաւարի մէջ չընող մարդակերպ հրեշները , ոչխարի մորթելով կեղծեալ յափշտակիչ գայլերը , քրիստոնէութեան անուան անարժան ձիւաղները , պիտի թափանցէր նոյա ամէն գաղտնի ձկտմանց եւ հետամբնութեանց , և իւր ուղղադաւանութիւնն եւ քրիստոնէական ողջմտութիւնը հզօր գէնք առնելով ի ձեռին արիաբար պիտի մաքառէր իւր գոյութեան թշնամի անտի-քրիստոնէաց ազանց դէմ , և երբէք չը պիտի մատնէր իւր Յիկեղեցական անկախ և ինքնիշխան ազատութիւնն ստրկութեան և գերութեան : Ահա այս ամէնուն խելամուտ լինելով Ս . Սահակ եւ Մեսրոպ , օփռե-



ցին Հայ—մանկուղին մտքերու և սրտերու մէջ բարոյական և մտաւորական զարգացման սերմերը, եւ իրենց քրթնաթոր վաստակոց և ջանից շնորհիւ տակաւ ժամանակի մէջ սկսաւ մի մտաւորական և բարոյական եռացումն Հայաստանի մէջ:

Սոյն անխոնջ վաստակաւորաց ցանած սերմանց սրանչեւի պտուղն եւ զաւահագին դիմագրութիւնն Հայոց ընդդէմ զազեշտական միջոցներն մագաղանութեան, երբ Պարսկաստան բխւաւոր զօրաց խումբերով Հայաստան տըշաւեց քրիստոնէութիւնը իւ պառսպուռ ջնջելու: Խիստ սրանչեւի և սրտագրաւ է Հայոց սոյնժամանակեայ ընտանեկան կենաց չքնաղ պատկերը, զոր կը ներկայացնէ մեզ Եղիշ աղուաբան պատմիչն: Հայք, թէպէտ և կորուսած էին իրենց ընտիր ընտիր նահատակներն պատերազմի դաշտին մէջ, թէպէտ և չունէին իրենց արի և դիւշաղն զօրավարները, թէպէտ և մեննեղութիւն և դառն տառապանք, բանտ, աքսորանք և գերութիւն կը բեցին, այլ սակայն երբէք չը թուաւ ցան իրենց հոգւոյ արիութենէն, այլ իշխանք և նախարարազունք պարսկական գիծին և խաւարչուտ բանտերէն, և կանայք նոցուն տառապեալ հայրենիքէն միմեանց քաջալեր կը կարգային, զոյս միայն խնդրելով. «Զի որպէս ըսկըտանք քաջութեամբ ՚ի նմին կատարեացին լի երկնաւոր սիրովն», Հրաշալի արգասիք քրիստոնէական լուսաւորութեան: Ոչ թէ միայն Պարսկաստան իւր դիւական բանակով, այլ եթէ համայն աշխարհ համագունդ զօրութիւն Հայաստանի վերայ դիմէր չք սխալ կարգանայր նորա արիութիւնը ընկճել, վասն զի թէպէտ և հպատակ էր նա մարմնով աշխարհական իշխանութեանց, սակայն Աստուածոյն սրան

չեւի սիրոյն իւր հոգւոյ վերայ թագաւորելովն ազատ էր նա հոգեւորապէս և անխախտ:

Այսպէս ահա Հայաստան հոլորձանաց առաջին փոթորկին ժամանակ փայլեցուց սրանչեւապէս իւր վեհ եւ բարձր հոգւոյ ճառագայթն և իւր եկեղեցւոյ գոյութիւնը անխախտ եւ հաստատուն պահեց, որոյ պատճառն Ս. Սահակայ և Ս. Մեսրոպայ Հայ—մանկուղին կրթութեւ և դաստիարակութեան համար ըրած անխոնջ երկոց և վաստակոց պտուղն էր: Սոյն օգտաշատ սկզբունքն, այն է քրիստոնէական կրթութիւն եւ դաստիարակութիւն Հայ—մանկուղին այնուհետեւ առաջին և նուիրական պարտք մնաց Սահակայ եւ Մեսրոպայ յաջորդ հայրապետաց վերայ իրեւ և առաջին խորիսխ և հիմն Աղբային և Եկեղեցական գոյութեան շէնքին: Ուստի երբէք ջանք և աշխատութիւն չը խնայեցին նոյն հանրաշահ սկզբանց գործադրութեան և արդիւնաւորութեան մասին:

Որովհետեւ Գունական նենդ հետամտութեանց պատրուակի սկսած էր բացուիլ, եւ նոցա գաղտնի ձրկտումները երեւան ելնել, ոյս պատճառաւ Եկեղեցւոյ հովիւք գուն գործեցին կրթութեան և դաստիարակութեան հետ սեռուցանել Հայ—մանկուղին յարգել և պատուել իրենց եկեղեցական ծիսից եւ արարողութեանց կերպերն, վասն զի հալածանքը ուղղակի հեթանոսութենէ չէր, որ առաւել կը զօրացնէր և կ'ամրապնդէր, այլ քրիստոնէութեան հակամարտ ժանտոգիէն, որ դիտնալով թէ ծէսերն եւ արարողութեանց կերպերն ազգի մը եկեղեցական գոյութեան և յարատեւ պահպանութեան միջոցներն մէկն են, գուն կը գործէր ծիսականապէս միայն չընել Հայաստանեայց Աւարելական



Եկեղեցին : Ահա Հայ ժողովուրդն իւր  
Եկեղեցւոյ դոյութեան և սրահպանու-  
թեան անհրաժեշտ հարկաւոր եղող  
այն երկու օգտակար սկզբունքները ,  
այն է կրթութիւն և դատաւարակու-  
թիւն Հայ — մանկուոյն , և անխախտ  
և անարատ սրահպանութիւն նախնական  
ծիօղ , աւանդութեանց և արարողու-  
թեանց իրրեւ իւր միակ պարտքն միշտ  
յարգելով և մեծարելով , և նոցա դոր-  
ժադութիւնը ընդհանրացնելով՝ կա-  
րող եղաւ քրիստոնէական սիրոյ զիմա-  
կով պտտութեան անտի-քրիստոնէայ  
ազանց ներքին գաղանի միտմանց խե-  
լամուտ լինիլ և ինքզինքը պաշտպանու-  
ղական գիրքի մէջ դնել : Սովաւ կա-  
րող եղաւ իմանալ որ Յունաց Քաղիւ-  
դոնական Ժողովի ընդունելութեան և  
միութեանական խնդրոյ մասին ըրած ան-  
դադար ստիպմանց պատճառն ոչ թէ  
իւր սխալ դաւանութիւնն էր , այլ  
իւր և Եկեղեցւոյ անկախութեան բար-  
ձումն : Կարող եղաւ նա զգալ որ Հը-  
ռովմայ արքանեկաց արձակած բիւ-  
րաւոր շանթերն ոչ թէ ուղղակի իւր  
քարոզած հաւատալեաց եւ վարդա-  
պետութեանց ընդ դէմ էին , այլ իւր  
ինքնօրէնութեան : Վերջապէս սովաւ  
կարող եղաւ նա Հայրենեաց մէջ այն-  
չափ դառն աղէտներ և հօլածանքներ  
կրելէն զինի , օտար գաղթականու-  
թեան մէջ անգամ անխախտ և անա-  
րատ սրահպանել իւր հոգեւոր Հայ-  
րենիքն , այն է կաթուղիկէ և Առաքե-  
լական Եկեղեցին , եւ մինչեւ ցայսօր  
կայ կանգուն , թէպէտեւ իւր որդւոյ  
մի մասն կամ տգիտութեամբ և կամ  
նիւթական շահու ախիտութեամբ  
հրապուրուած հատուածեցան , ոմանք  
պապականութեան և ոմանք բողոքա-  
կանութեան ծոցը զիմելով :

Նախնեաց քաջութիւնքը , նախ-  
նեաց սիրտըն արարքը հարազատ զա-

ւակաց փառք են , իսկ անհարազատաց ,  
որք միայն անցեալի սառւերով կը սար-  
ծին , մեծ նախապիք , մանաւանդ թէ  
կշտամբանք են : Յաւ ՚ի սիրտ կ'ասեմ  
որ մեր Աղբ . ներկայ կեանքը նախ-  
նեաց կենաց հետ բաղդատելով (եթէ  
կարելի է բաղդատել) անհուն խորի-  
մը կը տեսնուի , մեր գործքերը նախ-  
նեաց գործոց հակադասակերն է , մեր  
Եկեղեցւոյ արդի տարտամ վիճակը  
պարտք կը դնէ խոստովանիլ , որ մեք  
չան և շատ հեռի եմք մեր նախնիք-  
ներէն : Հայ — զաւակաց տգիտութիւ-  
նը Հայաստանեաց Եկեղեցւոյ պատմա-  
կան կենաց մասին օր ըստ օրէ կը խր-  
թնացնէ Եկեղեցւոյ վիճակը : Նոցա  
այս ողբալի տգիտութիւնը Հայոց բը-  
նական եղած կրօնասիրութիւնը օր ըստ  
օրէ կը շիջուցանէ և կը խորգացնէ զի-  
րենք մայրենի Եկեղեցիէն :

Ազգային այս տարտամ վիճակը  
սրտեհ առիթ համարելով մի քանի  
օտարամոլ և շահասէր անձինք զանա-  
զան դիւական մեքենաներ կը լարեն  
իրենց գաղանի նպատակին յաջողու-  
թեան համար : Եկեղեցական մասը ,  
որ երբեմն Եկեղեցւոյ սրահպանութեան  
համար անձնադիր շահատակութեամբ  
կը դիմագրուէր Եկեղեցւոյ եւ Աղբի  
թշնամեաց , այժմ ընդհակառակն (բիչ  
բացառութեամբ) անտարբերութիւն  
կը խորդայ , փոխանակ Աղբին զաւակաց  
կրթութեան և դատաւարակութեան  
հոգ տանելու լոկ աշխարհական փառաց  
և մեծութեան ետեւէն կը վաղէ : Այս  
ընթացքով եթէ մեք չը լինիմք պատ-  
ճառ մեր կործանման , անշուշտ օտար  
աղբերն որք յարածամ կը ձկտին մեր  
Եկեղեցական և Աղբային դոյութիւնը  
բառնալ , ասկէ օգուտ քաղելով կրկին  
պիտի մանեն ազգին մէջ , պիտի վրդ-  
վեն նորա խաղաղութիւնը , որպէս զի  
կարողանան աղբութեան յաղէտ և



խառնեալ ջրոյն մէջ աներկիւղ ձուկն որսալ : Մեր նախնիք հալածանայ դա-  
րերուն մէջ անգամ ազգ . լուսաւորու-  
թեան համար կը տքնէին . ազգ . ման-  
կըսեալ կը թուլ թեան և դաստիարա-  
կութեան համար վաստակելէն չէին  
դադրէր . իսկ մէք ներկայ լուսաւոր-  
եալ դարուն մէջ , ուր երբէք հալա-  
ծանք և բռնութիւն չը կան , և ուր  
կրօնական ազատութեան սկզբունքն  
հանրական ընդունելութիւն գտած է  
ամեն ազգաց մէջ , անտարբեր կը մը-  
նամք լուսաւորեալ ազգաց հսկայա-  
քայլ յառաջագիմութեան : Ճշմարիտ  
յառաջագիմութիւնը ոչ թէ հոյակապ  
դպրոցներու կառուցման մէջ է , այլ նոցա  
մէջ դասախօսութեամբ եւ աւանդուած  
ազգագրութեամբ և շահաւոր ուսմանց և գի-  
տութեց : Մէք տաւանց այս ճշմարտու-  
թե՛ համոզուելու , նոր նոր դպրոցական  
չէնք շինելու ետեւէ եմք : Մեր ազգ .  
և եկեղեցական պատմութիւնը պէտք  
է առաջին տեղ բռնէ Հայ վարժա-  
րանայ եւ դպրոցաց մէջ . որպէս  
զի Հայ — մանկաւոյն սրտին մէջ մա-  
տաղ հասակէն տպաւորուի սէր և  
համակրութիւն առ ազգն և առ մայ-  
րն իւր բազմաշարժար : Մինչեւ աղ-  
գային դաստիարակութեան հիմունք  
չը լինին ազգ . և եկեղեցական պատ-  
մութեանց ուսումն . անհնարին է մեզ  
համար իրական յառաջագիմութիւն  
եկեղեցւոյ եւ ազգին նկատմամբ ,  
եթէ սոյն ուսմանց կիրառութիւնն  
ընդհանրանայ ազգին մէջ , այն ժա-  
մանակ կարող եմք մեր ներկայ աղէ-  
տից դարման մատուցանել և ճշմարիտ  
յառաջագիմութեամբ ազգաց մէջնը-  
շանաւոր տեղ գրաւել . այն ժամանակ  
միայն կարող եմք ազգային ամբողջու-  
թիւնը անարատ և եկեղեցւոյ անկա-  
խութիւնը անվնաս պահպանել . ա-  
պա թէ ոչ ընդունայն են ամեն ջանք

և աշխատանք . ընդունայն ամեն ան-  
սրտուղ ազգասիրութիւն և եկեղեցւո-  
սիրութիւն :

Ա. Բ. Գ. Կարապետի  
Պօլեյի  
Աշա . Ժառ . Վար .

## Ա Ռ Ո Ղ Զ Ա Կ Ա Ն

( Շարունակութիւն . տես թիւ 4 : )

Մէք ամեն սովորական աղօթից ժա-  
մանակներէն զատ ամեն ժամ կարող եմք  
աղօթել , առանց մեր ուրիշ օգտակար  
աշխատութեանց արգելք լինելու ,  
վասն զի աղօթքը սրտի եւ մտքի առ  
Աստուած վերացումն է : Մեր սիրտն  
ու միտքը երբ լցուած է երախտագի-  
տութեամբ , շնորհակալութեամբ ,  
զարմացմամբ և առ Աստուած կատու-  
րեալ հնազանդութեամբ , երբ կր-  
թուած է մեր հոգին նորա կենսատու-  
խօսքերուն եւ օրէնքներուն մէջ , այն  
ատեն շարունակ նորա վերայ կը լինի  
մեր խորհրդածութիւնը եւ առ նա  
կ'ողջութիւն մեր սրտի զգացումները ,  
մեր գործքերն ու խօսքերը այնպէս կը  
կարգադրեմք որ ոչ երբէք Աստուծոյ  
կամաց ու հրամանին ներհակ լինի , և  
այն ատեն շարունակ մեր Աստուծոյ  
կախումն ունենալը ճանչնալով նորա  
ամեն տեղ ներկայ լինելն զգալով և նո-  
րա նախախնամական գործերը եւ չը-  
նորհքները գիտակցութեւ վայելելով  
միշտ օրհնութիւն , գոհութիւն և չը-  
նորհակալութիւն կը սլանայ մեր մըտ-  
քէն եւ երախտագիտութեան , սիրոյ  
եւ հաւատարմութեան զգացումներ  
կը թուլին մեր սրտէն եւ հաճոյական  
քաղցր նուէրներու պէս ընդունելի կը



լինին բարձրելոյն , որ այսպիսի երկըր-  
պագուներ կը խնդրէ :

Ո՛հ , սրչանի զմայելի , փառաւոր և  
նախանձելի է այսպիսի աղօթաւորի մը  
խոնարհ ու պարկեշտ տեսքը . երբ ին-  
քնն իր մէջ գումարուած , ներքին ու  
արտաքին զգայարանքներն ամփոփած ,  
սրտով ու մոքով , կամքով և յօժարու-  
թեամբ խոնարհած իւր Աստուծոյն  
հետ կը խօսակցի , սիրտը անոր կը բա-  
նայ , բոլոր զգացումներն անոր առ-  
ջեւ կը թափէ , և իւր կամքը նորա կա-  
մաց տակ կը խոնարհեցնէ : Այն խո-  
նարհութեան մէջ նա խիստ բարձր է ,  
մարմնով երկրի վրայ , բայց հոգւով  
վերացած է այս զգալի աշխարհէն վեր  
անհամեմատ բարձրութեամբ . թը-  
ռած , սլացած է նա Անմահին փառաց  
աթոռին առջեւ , հոն՝ այն մեծ վայել-  
չութեան մէջ զմայլած է անսպառնա-  
բերկրութեամբ , որոյ նմանը ոչ ոք չէ  
զգացած կենցաղոյս մէջ : Ուստի երկրի  
վրայ չը կայ երբեք ուրիշ ցանկալի վի-  
ճակ մի , քան հոգւով և ճշմարտու-  
թեամբ աղօթողին վիճակը , և ասանկ  
աղօթել գիտցողք կարող են իրենց ա-  
ղօթից պատասխանն ընդունիլ , ինչպէս  
ընդունեցին արդարն Զաքարիա և եր-  
կիւղածն Կուռնէլիոս և ուրիշ շատերն :

Ասանկ աղօթողներն իրենց կողմէն ալ  
կ'աշխատին , կըզգուշանան , կը փախ-  
չին մեղքերու առիթներէ և կը դոր-  
ճադրեն իրենց բոլոր կարողութիւննե-  
րն պատերազմելու մեղքի փորձու-  
թեան դէմ . ասանկ երկիւղածութիւն ,  
սրբութեամբ և անմեղութեամբ ա-  
ղօթողք աստուածային շնորհաց և օգ-  
նութեան կ'արժանանան , ուստի և ա-  
զատ կը մնան ի մեղաց : Երանի՛ անոր  
որ այս շնորհաց և օգնութեան կ'ար-  
ժանանայ , այնպիսին երկրի վրայ կառ-  
նու երկնից արքայութեան մէջ վայելե-  
լիք երջանկութեան քաղցրութիւնը և

այժմէն կգգայ իւր անձին մէջ այն փառ-  
աւորութիւնն ու խաղաղութիւնը ,  
զոր Աստուած սահմանած է իրեն հա-  
զանդողներուն համար :

Ը .

Երկիւղածութեամբ և աստուած-  
պաշտութիւն կրթուող ու զարգացող  
անձը օգնութիւն կը ստանայ և ան-  
ընկճելի արիութիւն կուեննայ ամբողջ  
և մօլութեանց դէմ՝ պատերազմելու  
և յաղթելու . կարող կը լինի անձը  
պահպանել բոլոր այն վտանգներէն  
ու փորձութիւններէն , որք դէպ ի  
մեղք կ'առաջնորդեն . կը ժուժկալէ  
կը համբերէ ամեն կրից շարժու-  
թեանց դէմ՝ եւ կը սանձէ դէպ ի  
մեղք յօժարեցնող բոլոր զգայարանք-  
ները , որով դիւրութեամբ կը խոր-  
տակէ իւր առջեւ լարուած ամեն տե-  
սակ մեղաց որոգայթները որք իւր  
ոտքին տակ կը սպառեն հրապուրիչ  
տեսքով մը , զինքը թշուառութեան մէջ  
ձգելու . և ահա այս ամեն զգուշու-  
թիւնները կ'իմանաւք պահք կամ պա-  
հեցողութիւն բառին տակ : Աստուած-  
պաշտութեան հետ անբաժան կերպով  
կապուած են Աղօթքն ու Պահքը :

ՊԱՀՔԸ , իւր բոլորական նշանա-  
կութեամբ կը հասկանաւք , պահպա-  
նել անձը քաջութեամբ մեղքի տանող  
բոլոր հնարքներու դէմ . Պահքը այս  
նշանակութեամբ ըմբռնողը չ'արհա-  
մարհեր երբեք ժուժկալութեան նը-  
պաստող ամեն կարգադրութիւն , օ-  
րէնք եւ պատուէր . այլ զգուշու-  
թեամբ , հաւատարմութեամբ և եր-  
կիւղածութեամբ իւր անձը կը կրթէ  
նոցա մէջ եւ անոնցմէ ամենէն անօ-  
գուտ համարածին մէջ ալ մեծամեծ  
օգուտներ կը տեսնէ՝ և բարի արդիւն-  
քը կը վայելէ :



Պահքը ամենակարեւոր միջոց մի է մեղքերէն, մանաւանդ ցանկութեան կիրքէն և վաճառող գիծութեան պիղծութեան մահաւորութեան տղատ մնալու համար, վասն զի եթէ չարութեան հակամարտիլը զգայարանաց և ներքին զգացմանց ձեռքովը կը լինի, ուրեմն մեղքէ տղատ մնալու համար անհրաժեշտ հարկ է զգայարաններն ու ըզգացմանքը սանձել ամեն սրտածառներու գէժ և զսպել այն ամեն բաներէն, որք կը շարժեն և կը գրգռեն զանոնք, կը մնորեցնեն միտքը, կը խանգարեն դատողութիւնը և կը տկարացնեն ու կը մեղկայնեն հոգին և դիւրութեամբ կը ձգեն փորձութեան մէջ:

Պահեցողութեան կրթութեան առաջին և սովորական տեսակն է կերակրոց պահքը, որ մարդիչ և կրթիչ պիտի լինի ուրիշ պահեցողութեանց մէջ ալ յառաջ գնալու: Նշան և թելադր պէտք է լինի ամեն տեսակ ժուժկալութեան, որպէս զի օգտակար լինի: Բայց թէ ինչո՞ւ այս սրբիւնքը չունի այժմ պահքը, պատճառն այն է, որ շատերը պահոց իմաստը չեն բմբռնած, շատերու համար պահքը լոկ սովորութիւն է, շատերու համար կեղծաւորութեան պատրուակ է, ուրով այլոց առջեւ պահեցող կ'երեւին և ամեն տեսակ անժուժկալութիւն 'ի ծածուկ կը գործադրեն, շատերն ալ պահքը խափա կատարելով իրաւունք կը համարին իրենց ամեն կամքերին կատարել և պահքով միայն արդարանալ: Ասանկ թիւր համոզմամբ է որ կերակրոց պահեցողութիւնը իւր մեծամեծ պոտենցիալը չարտարագրէր: զորս լու հասկանալու համար հետեւեալ խօսքերուս լու ուշադրութիւն դարձուցէք:

Պահքը Աստուած ամենաբարին սահմանած է մարդուս հոգեւոր եւ

մարմնաւոր օգտին համար: ( չը մոռնամք ըսել որ բուն պահքը ծով կը հասկանամք), ինչպէս բաց 'ի Հին Ատա կարանի բազմաթիւ օրինակներէն, նոյն ինքն Յիսուս Քրիստոս ալ իւր օրինակովը ցոյց տուաւ և քարոզեց որ այս պիտի կիրքերու գէժ Պահքը և Աղօթքը մեծ զենք են: Բայց Եկեղեցին իւր որդւոց դիւրութեան և շատ մը անտեղութեանց և վնասուց, որք մարդկան շարութեամբը մտած էին, առաջին առնելու համար կանոնական պահոց օրերը սահմանեց որ հաց ու աղցանով առանց համմի և հանգեր ձանքներու եղած ուտելիքներով եւ քիչ ուտելով բաւականանան: Այս եւս պէտք էր լինէր ծովի մօտ եղանակաւ մը, այսինքն քիչ ուտելով: Իսկ ծովը ազատ թողուցած է իւր քաքանջիւրին ջերմեռանդութեանն ու ազատ կամքին որ ուզողը Կարող է ծով պահել առանց մոռնալու իւր միւս զգայարանաց պահեցողութեան պարտքը: որով ամեն Քրիստոսեայ կը պարտաւորի ոչ միայն պահոց օրերը զգոյշ և սուրբ մնալ, այլ նոյն օրերը իւր անձը այնպէս կրթելով և յիշելով որ ինքը միշտ սուրբ մնալու պարտաւորութիւն ունի, ուրիշ օրերն ալ շարունակ զգաստ, ողջօրո՞հ և ժուժկալ մնալու է պահելով բոլոր զգայարանքները և սիրտն ու միտքը ամեն կերպ մեղանջումէ:

Բայց որովհետեւ մարդիկ ամեն պարագայի մէջ զխտեն բարի բան մը թիւրեւ եւ իրենց կամաց յարմարցնել, նոյնպէս պահոց՝ այս սրբութեան օրէնքին նպատակն ալ 'ի սպառ փոխած և իրենց ակորժակին ու կամաց յօժարութեանն են յարմարցուցած, որով ոչ թէ կ'օգտին, այլ յաւէտ կը վնասուին:

Օրինաւոր պահքը կամ ծով խիստ



մեծ օգտակարութիւններ աւելի, եթէ  
գաւթ, որդեակիք իմ, ձեր փոքրիկ հա-  
տակէն սկսիք տնտեսական կրթել սակա-  
ւակիրութեան, ժողովարարութեան և  
պահպանութեան մէջ, ձեր մարմինը  
հանգարտ կը սնանի, բնական կերպով  
կ'աճի, ներքին հիւթերու առաւելա-  
զանցութիւնը կը չափաւորի եւ չը  
գրգռեր զձեզ, չը վրդովեր ձեր ներքին  
հանգարտութիւնը և դուք հանգիստ  
կը մնաք օրասով, արթուն՝ մաքով,  
սուրբ՝ բարձր զգոյարանքներով և ա-  
ռողջ՝ երկար կեանքով, Հեղինակ մի ը-  
սած է, «Քանի՜ արով կերակրուողը մար-  
մնով առողջ է և, առանց ցաւի կրնայ  
ապրիկ»։ Յովսէպոս իմաստուն պատ-  
միչն ալ երկայն ապրիլը՝ կերակրոց պար-  
կեշտութիւնը եւ կարգադրեալ կեն-  
ցադավարութիւնը կը սեպէ։ Ուրիշ  
իմաստուն հեղինակ մի եւս այսպէս  
կ'ըսէ. «Պինդ պահպանողութենէն յա-  
ռաջ եկած մահը գիւրին է, իսկ ծանո-  
րու գծու արամարս կերակուրներէ ե-  
ղածը դժնդակ է»։ Սուրբն Յովհան  
ստեփաննի աւելի բացայայտ խօսելով  
կ'ըսէ. «Որովհետեւ մեր մարմնոյն մէջ  
աղ (կերակրոց) շատութենէն խառ-  
նուածքի անհաւասարութիւն կը տա-  
տահի, և երբ հիւթերը իրենց չափը  
կորսնցնելով անչափութեան հասնին,  
այն ատեն շատ ցաւեր եւ չարաչար  
մահ յառաջ կուգայ, զոր կարող է մե-  
կը հոգիին վերայ աղ պատահած տես-  
նել»։

Եւ միթէ ասոր այսպէս լըւալը բը-  
նութիւնը մեզ չը սովորեցներ. չէ որ  
երբ մեր ստամոքսը ծանր կերակուրով  
կը լեցուի և այն տեղ կ'ապականի, այն  
ատեն դուք տալու յոժարութիւն մի  
կը զգամք, միթէ չէ՞ք տեսներ որ ու-  
տել խմելու ետեւէ եզող շուտայտ մար-  
դիկ ի՞նչ սղորմելի կեանք և ինչ աղե-  
տալի վախճան կ'ունենան։ Ահա անի-

ներն անդամ՝ զմեզ կը յանդիմանեն,  
քանի՜ նոքա աղ երբեմն ծոմապահու-  
թիւն կ'ընեն և իրենց ներօգին գոյա-  
ցած հիւանդութիւնը անով կը վա-  
նեն։

Արտակրոց պարկեշտութիւնը եւ  
շտափաւորութիւնը ինքնին բնութեան  
օժանդակ կը լինի, արիւնը կը քաղու-  
րայնէ և ևս ակտարծարձ հիւթերը  
գուրտ կը վանէ զանազան ճանապար-  
հաւ, քաղց ինչպէս վերն ըսինք, այս  
օգուտները չէ կարող տալ այժմեան  
մարդկան գործածած պահքը, քանի՜  
այն պահք չէ, այլ աւելի գրգռիչ, ա-  
պականարար և վնասող է մարդկային  
կենաց։ Քանի՜ ի՞նչ օգուտ է պահք  
անուանել այն զեղծումը որ ուրիշ կե-  
րակուրներէ հրաժարելով, անոնց տեղ  
աւելի ջերմացուցիչ և գրգռիչ իւղե-  
րով, պղտկեղնեղով և զանազան տեսակ  
համեմներով կերակուրներ կուտենք,  
որք ակտրժակ կը գրգռեն եւ չափա-  
զանց ուտելու առիթ կը լինին, արիւ-  
նը եւ կենսական ոգիքը գրգռելով  
կը շարժեն մարդու ցանկական կիրքը,  
կը յոժարեցնեն մեզաց եւ առիթ  
կուտան զանազան հիւանդութեանց։

Ամեն մարդ գիտէ թէ խոհագոր-  
ծութեան արուեստը, որ մարդուս  
կենաց շատ փնասներ բերու, ամեն  
ճիգ թափած է ուտելոց օրերէն աւե-  
լի համեղ կերակուրներ պատրաստել  
պահոց օրերը, ուստի այժմեան պահ-  
քերը աւելի կերակրոց տեսակի փոփո-  
խութիւն է, քան թէ պահք։ Եկեղե-  
ցին այսպէս չէ սահմանած, մարդկու-  
ցին կամահաճութիւնը հնարած է այս  
պահքը։ Մեր մեղքերովը տկարացու-  
ցած ենք մեր անձը, մեր կամքը հնա-  
րած եմք վնասակար կերակուրներ և  
կենցեմք պահոց օրէնքը կը պախարա-  
կելք իբր վնասակար, կ'անարգէնք  
այս փրկարար ու կենդանապաշտ օրէնքը



և զայն լուծելով հաճոյք կը դդամք , առանց յիշելու որ պատուիրանադան ջութիւն է ըրածնիս , և երբ Եկեղեցւոյ մէկ պատուէրը առանց խղճելու կը լուծենք , այնուհետեւ արգելք չը մնար մեզ ուրիշ պատուէրներն ալ լուծելու , հաւատարմութեան դէմ մէկ յանցանքն ալ հերիք է անհաւատարիմ ընելու զմեզ , մանաւանդ ըստ պատուած օգուտն ալ չենք ստանար , անսովորութեամբ կամ զեղծումով , ինչպէս է այժմեան պահքը : Վասն զի ո՛ւր դնենք այն անտարժար յիշութիւնը որովք այժմեան պահոց կերակուրները կը պարտաստուին , որ ոչ մարմնայ եւ ոչ հոգւոյ օգտակար են . այլ պահքը օգտակար լինելու համար պէտք է հրաժարիլ այն ամեն կերակուրներէն ու ըմպելիքներէն որք սառտիկ կը զօրացնեն , չափազանց կը սնուցանեն եւ արագ արագ կ'աճեցնեն , և ըստ նմին համեմատութեան կեանքը կը կարճացնեն . ինչպէս են միսը , ճարպերը , համեմները , գինին , օղին և ուրիշ պարարտ ուտելիքներ և ու գելից ըմպելիք :

(Շարունակելի)

Մարտի(1) մէջ հրատարակուած հետեւեալ յոգուածը Ազգային ներկայ վիճակին նկատմամբ ուշադրութեան արժանի համարելով պատշաճ համարեցինք Սիմի մէջ կրկին հրատարակել :

ՆԵՐԿԱՅԻՍ ՎՐԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

Ա .

Ժամանակ մը եղաւ , գեռ երէկ , որ Հոյ ազգին մէջ գտնուեցան մարդիկ , որք սերտ և զօրաւոր կեդրոն մը

երեւակայելով , զանի քայքայիլ կարելորդ դատեցան , և ամենայն քաջութիւն ի գործ արկին , մեծ յարատեւութեամբ աշխատեցան և այն կարծեցեալ զօրաւոր կեդրոնին հասնելու համար մուրճ ի ձեռին ինչ որ դոտան՝ զարկին կոտրեցին ջախջախեցին , և հիմա բան մը տեղը գնել թէ որ պէտք կայ , ինչ պիտի գնեն՝ ան չենք տեսնելու Մենք այնպէս կարծենք թէ նա որ կը կործանէ , չգիտեր չենել . երանի թէ սուտ ըլլայ մեր կարծիքը . երանի թէ այդ կեդրոնը - թէ որ Պատրիարքարանն էր , ահա չիկայ , Էջմիածին էր՝ չերեւար , Սիւ և Աղթամար յայտնի է թէ ինչ են և ինչպէս կ'երեւան , - այդ կեդրոնը՝ այոյնքն այս ահագին յրուածութեան՝ անկարողութեւն ճարը՝ մեզի կարենային գտնել անոնք և կարենային կառավարութեան հնարք մը գտնել , և այս ջախջախ նաւուն փտած զեկը յանձնել այնպիսի ձեռքերու , որ գտնէ վստահութիւն գտնել յաջողէին Ազգին ընդհանրութենէն , և որ մեծն է՝ օգտակար ըլլայ : Եւ այս հրաշքը կարելի է այնպիսի անձինքներէ , որք ստուծութիւնն ու զոգարարութիւնը զենք առած , անոնց օրինակին հետեւեցան մինչեւ յայտօր , սրանց համար Ազգին մեծ պատմաբանը (1) կը գանդատէր ու կ'ըսէր . « Զի ոչ զեղուս զայս և զորդիտութիւնս հանդերձ սնտալի փառամուրութեամբն և կատաղի լեզուաբանութեամբն՝ սանձահարեցէք . այլ նիւթ նոցա անմաութեան զձեր ուսումնատեացդ տալով զբարս , բորբոքեցէք առաւել քան զհոյն Բաբելոնի » : Ես այս տողերը կարդալով մարդարեւութիւն մը կը նշմարեմ ժամանակիս համար : Լեզու չար , կապաղ լեզուաբանութիւն , տակից աւելի ինչ կրնայ

(1) Տե՛ս ԹԻՒ 1829 :

(1) ԹԻՒՄ , Բ . ԳԲ .



ըլլալ, կործանման ոգին զէնք ըրած՝  
 ինչ որ կայ կը թունուորէ . այսօր կը  
 բարձրացնէ՝ վաղը գետնէ գետին դար-  
 նելու համար . ո՛վ, ինչ ազատ մնաց  
 աս անոր փառամոլ-խեղձ ձեռքէն . համ-  
 բաւ, պատիւ, առաքինութիւն, ան-  
 շահասիրութիւն, համբերութիւն,  
 ազգօգուտ աշխատութիւնք, ուսմունք,  
 գիտութիւն, կրօնք, օրէնք, ամենայն  
 առաթուր ոտքի տակ կերթան՝ ոչ հրս-  
 կաներու՝ այլ սղորմելի դաժաճներու,  
 որք խաղալիկ ՚ի ձեռս տաճ ժողովը  
 գեան մը տգիտութիւնը՝ կը հարուա-  
 ծեն Պատրիարք, Տեղապահ, Եպիս-  
 կոպոս, տխաղոս, պատիւ, վարժապետ,  
 դատախարակ, քահանայ և խմբագիր .  
 միայն և բաւականէ թէ ասոնք քիչ մը  
 բարձր ըլլան սրտով և մարտի՛ արհա-  
 մարհելու համար այդ խառնադան-  
 ձի արժանի լեզուն և գրութիւնք . բայց  
 այդ արհամարհողներուն պատիժը պի-  
 տի ըլլայ այս, որ երբ Ազգը կ'ընկնի  
 և կ'աղլտտի, իրենք ուլ հետը կ'իջնան,  
 իրենց վրայ ալ այդ աղտեղութենէն  
 քիչ մը բան կը ցատկէ . Ընտանի թըշ-  
 նամին տունը կը վիզնէ, բայց փառը  
 բոլոր գերդաստանին է . քնանալն ան-  
 քաւելի յանցանք է . Եւ այդ Հայ պատ-  
 մութեան հայրը, տեսէք, չ'ուզղեր իր  
 խօսքը անոնց՝ որ չար և կատաղի լեզ-  
 ուով և սնտոի փառամոլութեամբ և  
 տգիտութեամբ ապականութիւն էին  
 Ազգին մէջ . չէ, անոնց հետ խօսիլ ար-  
 ժան չի համարիր, վասն զի չեն ուղ-  
 ղուիր . այլ զանոնք կը կշտամբէ, որ  
 կրնային ևւ չուղեցին սանձահարել  
 « Զլեզուս չարս եւ զտգիտութիւնս »  
 իրենց անհօգութեամբն ու անտարբե-  
 րութեամբ :

Բայց այսօր ընտանի թշնամւոյն քով  
 կայ օտարացեալ թշնամին՝ որ Ազգին  
 կործանմանցն ու բաժանմանց վրայ  
 կ'ուրախանայ, կը ծախահարէ, նորա

կրօնական իշխանութիւններն ինչ որ  
 կան՝ մատերուն վրայ կը համբէ, նորա  
 խեղճ ազգութիւնը կը ծաղրէ, անցեա-  
 լին ու ներկայն կը նուաճողացնէ, տգի-  
 տութիւնն ու աղքատութիւնը կ'ար-  
 համարէ :

Եւ այս վիճակը տեսնելով, ինչ  
 կ'ըզայ օտարը՝ որ անտարբեր է, և օ-  
 տարը՝ որ այս վիճակէն օգուտ կը յու-  
 սայ, թող խորհրդածէ ո՛վ որ իր հարց  
 հարադատ արիւն ունի երակներուն  
 մէջ . Իսկ խորթացելոյն և անհարադա-  
 տին՝ որ իր ազգը միլիոններու կը հանէ  
 առանց համբանք գիտնալու, որ ան-  
 ցեալը կ'երազէ առանց ներկայն տես-  
 նելու, որ օտարին ոսկին՝ ձեռքին մէջ  
 կշռելով չի գանդաղիր աժան դնով իր  
 ազգին թոյն ծախելու, որ վաստակ կը  
 համարի երկու հազար հինգ հարիւր  
 ղրուշը Պատրիարքի անհետութեամբ՝  
 և կուրախանայ, իմացնել սրտք կը  
 համարինք թէ կայ օտար մը՝ որ Հայաս-  
 տանի առաջնորդական աթոռներուն  
 քով հաստատած եպիսկոպոսական ա-  
 թոռներ ունի, և տարին քսանական հա-  
 ղար ֆրանք կը համբէ . թէ կայ օտար մը՝  
 որ իր կրօնական շահերը պաշտպանե-  
 լու համար, շահեր՝ որ Հայ Եկեղեցւոյ  
 և ազգութեան միշտ ընդդիմակաց ե-  
 ղած են, դեռ երեկ հաղարներով ու-  
 կի վճարեց . Թէ կայ օտար մը որ Հայ  
 ժողովուրդն իր Եկեղեցւոյն գրկէն օ-  
 տարացնելու համար՝ ազգաց իրաւուն-  
 քն և ամենայն արդարութիւն սոնա-  
 կոխ ըրեր է երբեմն՝ գողնալով, յա-  
 փրշտակելով, չարչարելով և բարոյա-  
 պէս ալ սպաննելով իր մէկ Պատրիար-  
 քը . և այսօր իր բոլոր դիւանագիտա-  
 կան ուսմունքն ու հնարքը կը զինէ  
 ջախջախելու համար զանոնք՝ որ գի-  
 տութեամբ կամ անգիտութեամբ հայ-  
 րենի Եկեղեցւոյն կը մօտենան, և յա-  
 վրշտակելու համար Հայ Եկեղեցւոյն



ձեռքէն հողու թիզ մը, կտորած կան-  
թեղ մը, ոսկորի կտոր մը, աւելլու ի-  
րաւունք մը, վարագուրի ծաւն մը: Որ  
զօրութիւնն է որ կրնայ դիմագրել Մա-  
քիաւիկէի և Նօյոյցի դռնակներէն թէ-  
հայուն բարոյական զօրութիւնն այս  
վիճակին մէջ ինչպիսի վտան պիտի  
կարենայ գործածել այս յարձակման  
դէմ, թող մտածեն որոնք միտք ունին:  
Իսկ որոնք որ չունին, թող բարբառ-  
նեն, թող կանչուրուան թէ՛ սա կա-  
շառակութիւնն է, նա մտանիչ է, թէ այս  
Մահմանադրութիւնը բռնադատեց,  
թէ այն բռնազրօսեց, միւսը գերեզ-  
մաննոցը ծախեց, անդինը բռնակիր-  
ներով և ջրհանկիրներով բռնացաւ,  
ասոնք Մահմանադրութեան տօնին չե-  
կան, անոնք կեցցէ չը պօռացին, սա  
Վատակ է, դա Մերուժան է, նա Յու-  
դա է, և վերջապէս ամբաստանեալ է:  
Ասոնք և այսպիսի խօսքեր, որ աւանդին  
միամասութեան և տգիտութեան քմայ  
չատ յարմար են. թէպէտ ստուերնե-  
րու մէջ կան մարդիկ՝ որք բու դիպին  
թէ յիմար և անհիմն ու անճոռնի ամ-  
բաստանութիւնք, զրոյարտութեանց  
հաւատար անպիտան ու անարդէակ  
ներէ եկած նախատինք են ժողովքնե-  
րու՝ որ Ազգ մը կը ներկայացնեն, որ  
դեռ պատուոյ հետք մը կը կրեն, թէ  
եւ նշանաւոր յիսունաւերիւններն ալ  
իրենց մէջ պարունակեն, բայց դար-  
ձեալ կրնան արդարադատ ժամանակ  
ներ ունենալ և իրենց ազգին օգտա-  
կար ծառայութիւն մ'ընել: Իրենք  
լաւ գիտեն թէ ինչ որ Մերուժան,  
Վատակ, մտանիչ կ'անուանեն, այն  
մարդիկն են՝ որ իրենց Մահմանադրու-  
թիւն տուին, նոյնք գործադրել սով-  
բեցուցին, գրելու՝ այսինքն միտեցու-  
անտանձ ազատութիւն տուին, և թե-  
րեւս չափազանց աղնուականութեամբ  
ի դատարան չկանչեցին և զանձնիս

արդարացին նախատինք համարեցան,  
երբ ազէկ դիտեն թէ բռնակիր եւ  
ջրհանկիր գործէք փնտառ չկար, այլ  
օրինաւոր քուէխք ամոռ ելլողներն՝  
ոմանց քառութեան և գրգռութեան  
և ժողովրդեան սոգէտ անտարբերու-  
թեան առջեւ՝ իրենց կամօքն իջան ու  
ազատ թողուցին ամոռը, և խնդրե-  
ցին յԱստուծոյ՝ ի սէր ազգին որ ա-  
ւելի արժանաւարդոյնք հան բաղմն-  
ցնեն:

Բայց անոնք որ միամտաբար այս  
խաւարային էակներուն գործքներն են,  
որ փոքրիկ շահերու սպասարկութե-  
ազգին տունը կը կործանեն, միթէ ըն-  
տանի թշնամի անուշին արժանի չեն:  
Ըստ մեզ՝ չիտ աւելի փնտառար մէկը  
քան զայն մարդը՝ որ չկրնար իրենց  
մարդկութեան պահանջներն իրարեւ-  
դէտ ըլլալով անոր կրօնական և քաղա-  
քական պիտոյից, կ'ելլէ առաջնորդ  
կը կանգնի, օրինաւորութիւնը կը լու-  
ծէ, անկանոնութիւնը օրինաւոր կը  
քարոզէ, կարծելով թէ վատահամ-  
բաւելը պաշտօն մ'է՝ զոր գրիչ մը  
բռնել կրցողն աներկիւղ պէտք է գոր-  
ծածէ: Չիտեր այդ խելո՞ք էակը թէ  
մարդկային ընկերութեան մէջ ամենէն  
կարեւորը մարդն է, մարդ՝ որ ուսմուն-  
քով, դատարարակութեամբ, հանձա-  
րով, դիրքով, ծննդեամբ եւ հարբու-  
տութեամբ կը տարբերի իր նմանե-  
րէն, և որ իր համանմանները կառա-  
վարելու համար ստեղծուած է: Այս  
մտածութիւնը թէպէտ բոլոր ժողո-  
վրդական կամ աւանդաբանական դը-  
րութեանց հակառակ ալ երեւայ, բայց  
ճշմարտութիւն մ'է: Տեսէք դպրոց-  
ները, սւր ութսուն կամ հարիւր տը-  
ղայ չորս հինգ տղա օրինակին, առաջ-  
նորդութեան եւ անկարկութեան կը  
հնազանդին, անոնց ազգեցութեամբ  
կը խաղան, կը դիմագրեն, կը խափեն,



անոնց օրինակաւ կը խոնարհին , կը ճնշուին , կը հպտտակին : Ի՛նչ որ է ազան դպրոցի մէջ , նոյն է մարդն այս աշխարհիս մէջ՝ որ դպրոցին ընդարձակն է : Ուստի մարդը՝ որ կառավարելու , շարժելու , հանդարտեցնելու համար ստեղծուած է , շատ քիչ է թուով , այնչափ շատ չէ , որ երեւելի պատմիչ մը Փաղղիոյ առաջին սահմանադիր ժողովոյն ամենէն մեծ սխալմունքը կը համարի այն օրէնքը՝ որ անձնութեամբ ժողովոյն անդամները վերընտրելի ըլլալէ կը դադրեցնէր առաջին անդամներն համար , վասն զի ինչ չափ ալ հարուստ ըլլայ աղդ մը տաղանդաւոր գրականներով , ոչ երբէք ութ հարիւր հազար հոգի առաջին աստիճանի հանճար կրնայ ցուցնել : Ուստի անոնք որ ինկած Հոյ աղգին , որուն դաստիարակութեան գրքեր , դպրոցներ , վարդապետանոցներ , վարժապետանոցներ և յաւաքող գիմնութեան ամեն գործիք կը պակսին , ինչ որ աչքի կ'երեւայ , տաղանդ , հանճար , առաքինութիւն , ուսմունք , կը բամբասան , կը զրպարտեն և արհամարհ կը ցուցնեն , այն անոնք մեծ դատաւարութեան արժանի են :

Անոնք ապագային մէջ այնչափ պէտք է արհամարուին ինչ չափ իրենց սիրար արհամարհ է , ինչ չափ իրենց տաղանդը պղտիկ է , ինչ չափ իրենց ուզին փոքրիկ է . վասն զի իրենք գիտեն թէ աղգին մէջ՝ ի բաց առեալ քանի մը պաշտօններ՝ ամենքն ալ ձրի են . ուստի ձրի աշխատիլ յօգուտ աղգին և ձրի նախատուիլ , իրենց անձնական պատիւը , համբաւը ամեն օր անպիտան ձեռքերու մէջ խաղաղիկ տեսնել , համբերել եւ յարատեւել , ոչ է տըւեալ ամեն անձնուէր առաքինութե . նա որ համբերութիւն քարոզեց , աւարդ և չղբերթ ծառային՝ որ իրեն

ձեռք վերցնել համարձակեցաւ , « Թէ որ ճշմարտը կը խօսիմ ինչու կը դարնես » հարցուց : Եւ որովհետեւ այդ գերբնական առաքինութիւնը շատ հաղուագիւտ է , անոնք՝ որ աղգային գործերը զրուելի կ'ընեն և ըրին կարող անձանց , որպէս զի իրենց պէս անպիտաններու տեղ բանան , ընտանի թշնամի անուշիկ արժանի են : Իսկ անոնք որ բրածնին և ըսածնին չգիտնուլով՝ գիմովութիւնը իրենց չքմեղս կը համարին , Քրիստոսի պէս ժողովրդեան շուն ենք և հաշիւ մեր պարտքն է կ'ըսեն և կը հաշին , և ազէտ կոյր ժողովուրդ մը կը գանեն որ իրենց յիմար դրօշակին կը հետեւի , ամեն գիմացը ելողը կը խորտակէ , անոնց համար կարելի է եւ պէտք է ըսել , « Տէր , թող գոցա զի ոչ գիտեն զինչ գործեն » : Մենք չենք կարծեր , մանաւանդ թէ մեր կարծիքն է աղգին օգտին համար դատաստանի ենթարկել սանձելու համար այդ ապերաստան լեզուները , ջախջախելու համար այդ թունալից կղակները , որոնց օգուտը շատ քիչ է՝ եղած վնասին հետ բողբատմամբ : Վասն զի արդէն աղգին կառավարութեան միջոցները տկար , անկարգութիւն և ագիտութիւն դրացեալ , եւ օտարն ու օտարացեալ աղգին փարախը յամենուստ կը պաշարեն , և տաղտկութիւն այնչափ սատիկ է ներսը , որ աս վիճակն եթէ երկարի՝ փարախը թափուր և ամայի պիտի մնայ :

ԾԵՐԵՆՑ

## ԱՍՏՈՒԱԾ

(Նախին Ժիւտոյո-Թեան քաղաքոյն :

Աստուծոյ գոյութիւնը հաստատուած է բոլոր աղգոյ միաբանու-



Թեամբ : Բայց կենդանեաց մէջ մի միայն մարդն է որ ունի քանի մը ծառնոթութիւն Աստուածութեան վերայ . և բովանդակ մարդկութեան մէջ չկայ երբէք այն աստիճան վայրենի ժողովուրդ մը , որ չճանաչէ Աստուծոյ գոյութեան կարեւորութիւնն , թէ և չունենայ ստոյգ գաղտփար նորա բռնութեան վերայ : Արդ՝ որովհետեւ ամեն բանի մէջ բոլոր ազդաց հաստատուն միահաւանութիւնը գրեթէ բռնութեան լեզուն և ճշմարտութեան վիայութիւնն է , պէտք է խոստովանիլ ուրեմն որ կայ մի Աստուած :

Աստուծոյ գոյութեան ընդդէմ՝ թէ մտադիւրութեամբ և թէ կարծեօք խօսելուն մէջ միշտ անպատկառութի և ամբարշտութիւն կայ : Ահա այս պատճառաւ էր որ Պրոթաիոր՝ իւր ժամանակի անուանի տփեսասուն , երբ յատուկ հեղինակութեամբ մը Աստուծոյ գոյութիւնը կ'ուրանար , Աթենացւոյ ձեռամբ արքորեցաւ իւր հայրենիքէն և տէրութեան սահմանէն , և իւր հեղինակութիւնքն հրապարակաւ յաճիւն դարձան : Կը պատմուի նա և որ մէկ տաղանդ արծաթ խոստացած էր զայն սպանողին : Ահա այսպէս Աստուծոյ գոյութեան վերայ պարզ կասկածն իսկ չկարաց զերծ մընալ պատուհասէն :

Ինչ աստիճանի անմիտ պէտք է լինի նա , որ իւր աչքերն յերկինս ամբառնալով տակաւին չհամողուի թէ կայ մի Աստուած : Բնութեան մէն մի հրաշալիքն կը հաստատեն Նորա գոյութիւնը , եւ կ'արայցուցանեն մեզ որ կայ միակ Աստուած՝ կարող և արժանաւոր ճարտարապետ հրաշակերտից և վարիչ այնպիսի սքանչելի կարգադրութեան :

Աստուած իւր էութեամբը զերծ է ամեն տեսակ պատճառանքներէ , և

այս առթիւ ահա՛ արձանագրուած էր ի հնումն Սախի (1) հին տաճարի մը գրան վերայ , հետեւեալ խիստ նշանաւոր խօսքերն . « Ես եմ՝ որ էրն , էն եւ լինիցի . ոչ օք երբէք կարաց բողարկել վրս . իմ յառաջ բերած արդիւնքն Արեգակն է » : Այսպէս նա և երբ Հիերոն բռնակալն՝ հարցուց հըմուտ փիլիսոփայ եւ հաճելի բանաստեղծ՝ Սիմոնիսին թէ՛ ի՞նչ է Աստուած , նա մի օր ժամանակամիջոց պահանջեց խորհելու : Մի և նոյն հարցումն ուղղեց նա հետեւեալ օրն , բայց այս անգամ երկու օր ժամանակամիջոց պահանջուեցաւ , և այսպէս քանի որ բռնաւորն կը կրկնէր հարցումն , Սիմոնիս կը կրկնատուէր ժամանակի քանակութիւնն . վերջապէս Հիերոն զարմանալով հարցուց սոյն յետաձգման պատճառն . « Որովհետեւ , ասաց , քանի ես կը մտածեմ՝ նորա վերայ , այնչափ նուազ տեղեկութիւն ունենալս կը զգամ » :

Մենք չեմք կարող կատարելապէս խօսիլ Աստուածութեան վերայ , եթէ նա ինքն չմատակարարէ մեզ լոյս . որովհետեւ նա՛ ինչպէս աղբիւր է բարութեան նոյնպէս և աղբիւր լուսոյ : Բանաւորութիւնը մի միայն մեզ կը ծանուցանէ թէ Աստուծոյ բնութիւնը գերահրաշ է եւ ամենակատարեալ : Վերջապէս , մենք այսչափ դաղափար միայն կարող եմք ունենալ Աստուծոյ վերայ , որ նա է հոգի անխառն եւ ամբիժ , տեսող և գիտակ ամենայնի եւ շարժիչ ամենայն իրաց : Ուրեմն ի՞նչ զանազանութիւն կայ Աստուծոյ և մեր բնութեան մէջ : Մեր ամենագլխաւոր մասն հոգին է , Աստուած բովանդակապէս հոգի է եւ մի միայն իմաստութիւն և բան : Նա անտես է և մի միայն մտօք կ'ըմբռնի :

(1) Սախի է քաղաք Եգիպտոսի :



Մենք ուրիշ ինչ գաղափար կարող եմք ունենալ Աստուծոյ վերայ, և թէ՛ ո՛չ թէ՛ նա է յաւիտենական էակ: Բնութիւնը որ ուսոյց մեզ թէ կայ մի Աստուած, ընդ նմին դրաւ մեր մէջ Նորա յաւիտենականութեան և երանութեան հաւատն: Երբ հարց ուեցաւ օր մի Թաղէսին թէ՛ ինչ է Աստուած. պատասխանեց «Որ չունի ո՛չ սկիզբն և ո՛չ վախճանն»:

Աստուած կը տեսնէ ամենայն ինչ և կ'առաջնորդէ ամենեցուն. նա կը կառավարէ տիեզերքն եւ կը հսկէ մարդկային ամեն իրոց վերայ թէ իրենց ամբողջութեան և թէ՛ առանձինքն հանգամանաց մէջ: Ուր որ դառնաք պիտի գտնաք Աստուած մի, որ զձեզ կը գիտէ, չկայ ոչ ինչ որ անկից դուրս լինի. նա կը լիացուցանէ ամենայն ինչ զոր ստեղծած է: Այն ամեն բարիքն, զորս Նա ստեղծած է ՚ի պէտս մարդկան, ինչպէս են լոյսը՝ զոր կը վայելեմք, օդն՝ զոր կը շնչեմք, Նորա՝ մեզ շնորհած պարգեւներն են: Պէտք է հաստատապէս դնել ՚ի մտի որ Աստուած՝ Տէր և նախախնամող է ամենայնի. որ իւր իմաստութիւնն և զօրութիւնը աշխարհի վերայ ամեն գիպաց մէջ յառաջակայ է. Նա կը կարգայ մեր հոգւոյ մէջ եղածն, և կ'ընտրէ չարերն ու բարիները: Եթէ մենք լաւ վերահասու եղած եմք այս ճշմարտութեանց, յաւիտենական վրիժուոյ երկիւղն պէտք է հեռացնէ զմեզ ՚ի մեղաց: Որովհետեւ այն մարդը, որ կը հաւատայ թէ Աստուած ամենատես է, բնաւ չպէտք է մեղանչէ ո՛չ ՚ի խաւարի և ո՛չ ՚ի տււրնեան:

Երբ Թաղէսի հարցուեցաւ թէ՛ արդեօք կարելի է որ Աստուած չգիտնայ մեր գործքերն. «Եւ ո՛չ իսկ մեր խոր հուրդներն» պատասխանեց փիլիսոս

փայն: Այս պատասխանը դաս մ'է, որ կ'ուսուցանէ մեզ թէ՛ սրտոտական եմք մենք հսկել մեր հոգւոյ սրբութեան ինչպէս մեր ձեռաց. որովհետեւ Աստուած տկանատես վկայ է նոյն իսկ մեր ամենածածուկ խորհրդոց. մի և նոյնն ասոյց Սեքստոս Պիլաթոսորեան. «Երբ դուք անիրաւութիւն կը գործէք՝ Աստուած կը տեսնէ, նա կը տեսնէ նոյնպէս երբ դուք զայն կը մերժէք»:

Պատուաւոր մարդը լի է կրօնիւ, և այս պատճառ է որ նա կը վիճանի ամեն սրտոտհարաց. նա գիտէ որ ատոնք արդիւնք են հրամանի Տեսառն, որով կառավարուած է ամենայն ինչ: Վերցուցէք Աստուածային պաշտամունքն, և ահա՛ չպիտի մնայ ո՛չ հաւատարմութիւն, ո՛չ ընկերականութիւն, ոչ արդարութիւն՝ այս գերապանծ առաքինութիւնն: Աստուծոյ ամենէն աւելի արժանաւոր պաշտօնը, ամբիժ անստգիւտ և անարատ հոգւոյ մը յորդանքն է, անմեղ հոգի մը Աստուծոյ ամենէն աւելի հաճոյ սրբաւկայր մ'է: Երբ Սփրտտես իւր աղքատութեան համեմատ զո՛հ կը մատուցանէր, բնաւ չէր կարծեր որ իւր նուիրատութիւնն նուազ արժանիք ունենայ քան զոր ընչեղք առատութեամբ կը նուիրէին: Վասն զի, կ'ասէր նա, արժանիքը Աստուծոյ մեծաւոր զոհեր ընելու վերայ չէ, որովհետեւ չարերն հաաարաւորէն աւելի մեծատուն լինելով պիտի կարծուէր թէ անոնց պաշտամունքն աւելի հաճոյ պիտի լինի Աստուծոյ:

Հին Հռովմայեցիք կը մատուցանէին Աստուածութեան աւելի բարեպաշտական քան շքեղ պատարագներ: Որչափ իրենց պաշտամունքն պարզ էր, այնչափ իրենց ուխտն զօրաւոր եւ արդիւնաւոր էր: Նորա մի միայն ի-



բենյ սեզանի երեխայիքն կը նստիւն տիւրով և աղիւ հանդերձ : Առկիտ Պասկիսո, Սամիսայոյ գէտ պատե-  
րազմ քանակէ յատալ, ուխտեց Ա-  
րամազդայ տաշտ մի գինի, եթէ յազ-  
թանակն իրեն տայ : Արքադործեալ ա-  
մենայարգի արձաններն հողէ շինուած  
էին, և չէին շիներ նորա ոչ ոսկիէ և  
ոչ արծաթէ. և Հռովմ բնաւ առիթ  
չունեցաւ ամբաստանել զանոնք, որք  
այս եղանակաւ կը պաշտէին չատու-  
ռածներն : Արաշէտեւ Արամազդ ա-  
ւելի քաւիչ և ձեռնառու կը թուէր լի-  
նել երբ իւր արձանը կաւեղէն շինուէր  
քան ոսկեղէն : Տաճարներու մէջ հա-  
ռարակութեան մեծարանաց համար  
գրուած արձաններն լոկ փայտէ կամ  
հողէ շինուած էին, մինչև Ասիոյ աշ-  
խարհակալութեան ժամանակն :

(Շարահալիւ) :

Թարգ. Ի Դալ :

### ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆԻՔ

Անցեալ ամսոյն վերջերք քաղաքս  
հասաւ Ռուսոյ Գամասրոսի Հիւպա-  
տոս Պ. Եօղէֆօվիչը՝ այս տեղի Հիւ-  
պատոսի փոխանորդութեան պաշտո-  
նը վարելու. եւ ամսոյս 1 ին Հիւպա-  
տոսը պաշտօնական այցելութեան գը-  
նացին : Հետեւեալ օրը՝ ինքն եւս փա-  
խադարձ այցելութեան գնաց : Նոյն  
օրը մեկնեցաւ տեղոյս հիւպատոս Պ.  
Քոմէվնիքով պաշտօնական գործերու  
պատճառաւ. դէպ ի Պօլիս ուղեւորե-  
լու :

Ամսոյս 8 ին Օմարի մզկիթին մէջ  
երբ 16 բանւորք մէկ կտոր տախտա-  
կի վերայ կայնած կ'աշխատէին, յան-  
կարձ տախտակը կտորելով, բանւորք  
իրարու վերայ կիյնան. ասոնցմէ մին  
որ ամենուրեք տակը մնացած էր, ստու-  
տիկ խորտակուելով 3 օրէն յետոյ մե-  
ռաւ :

— 10 ին Տեղացի Օմար Պաշէկի ա-  
նուն տաճիկ մը այս տարուայ ցորենի  
օլութեան պատճառաւ հրեայի մը

հետ ընկերութիւն ընելով մի քանի  
անգամ քաղաքս ջրմաններէն ցորեն  
բերելով երբ գործը յաջող կը տեսնէ  
մեծ գումարով ցորեն կ'առնէ, բայց  
բարեբաղդաբար ցորեն առած օրը,  
մինչդեռ չափը 5' զուշ կ'արժէր, 28  
զուշի իջաւ. և որովհետեւ հաշիւը ը-  
նելով 300 լիրայի մօտ վնաս մը կար ի-  
րեն համար, մեծ մտաւտանջութեան  
մէջ կ'ընկղմի. այսպէս միջեւ երեկոյ  
տանջուելով գիշերուան ժամը 1 ին  
տան սանտուխէն վար իջեւելու ժամա-  
նակ, կաթուածահար լինելով կը գլու-  
րի ու կը մեռնի :

Ընչաքաղցութիւնը սասանկ սրչտի  
դոհեր ունի արդեօք . . . :

— 15 ին Գերմանացի երկու գաղ-  
թական երիտասարդք երբ Ըրթաս  
(Եփրատ) ըստած գիւղը նստած կը  
զուարճանային, խոսիւթիւն մը ծագե-  
լով իրենց մէջ և մին սաստիկ արքած  
լինելով զանակով իւր ընկերոջ կը զար-  
նէ : Թէ և հարուածը վտանգաւոր էր,  
բայց չուտով գորման տանելով, վը-  
տանգին առաջքը կ'առնուի :

Ահաւասիկ շուպտութեան պար-  
գեւած երեւելի հեշտութիւններէն մին . . . :

— 21 ին Զմիւռնացի Յոյն վաճա-  
ռական մը որ երկար ատենէ ի վեր  
ոյս տեղ վաճառականութեան կը պա-  
րապէր, վերջին տարիներս գործե-  
րուն շարունակ ձախողութեան պատ-  
ճառաւ այն առտիճանի չքաւորու-  
թեան մէջ կիյնայ, որ այս տարի չէր  
կարող խանութի վարձքն անգամ վը-  
ճարել, որով եւ կալուածատեր Յու-  
նաց վանքը ստիպուեցաւ զինքն խա-  
նութէն հանել : Յիշեալ վաճառակա-  
նը յուսահատած վերջին հրաժեշտը  
տալով իւր ամուսնոյն և նորասի դա-  
ւակաց և միանգամայն իւր ընկի վեր-  
ջին մնացորդը երեքական դահեկան  
բաժնելով, հեռիոտս դէպի Երիթով  
կ'ուղեւորի եւ 3 ժամու ճանապարհ  
երթալէն յետոյ կ'իյնայ կը մեռնի : Գիւ-  
ղացի անյորդները դիակը ճանապար-  
հին վերայ գանկով քաղաքս բերին :